ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
1. ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5
2. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9
3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 20
4. ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ 27
5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ 36
6. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ 38
7. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ 42
8. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ 54
9. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ 57
10. ԱՆԿԱԽ ԵՎ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ 61
11. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵ 65

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում նոր Սահմանադրության ընդունման գործընթացը պայմանավորված է պետության և հասարակության զարգացման ներկա փուլում մայր օրենքի խորքային վերաիմաստավորման անհրաժեշտությամբ:

Գործող սահմանադրական կարգավորումները ժամանակի ընթացքում բախվել են ոչ միայն կիրառական խնդիրների, այլև լեգիտիմության շուրջ ձևավորված հանրային կասկածների հետ: Հանրային ընկալման մեջ այն չի դիտարկվել որպես ժողովրդի ազատ և ամբողջական կամարտահայտության արդյունք, որի հետևանքով Սահմանադրությունը լիարժեք չի ընկալվում որպես հասարակության լայն համաձայնության վրա հիմնված հիմնարար փաստաթուղթ:

Այս պայմաններում նոր Սահմանադրության ընդունումը դիտարկվում է որպես լեգիտիմության և պետական հիմքերի ամրապնդման գործընթաց: Համաժողովրդական հանրաքվեի միջոցով Սահմանադրությունը պետք է ստանա ոչ միայն իրավական, այլև իրական քաղաքական և հասարակական լեգիտիմություն:

Նոր Սահմանադրությունը պետք է դառնա ոչ թե ձևական փաստաթուղթ, այլ քաղաքացիների առօրյա կյանքի վրա ազդեցություն ունեցող գործիք՝ ամրագրելով նրանց իրավունքները, պարտականությունները և պետության կազմակերպման սկզբունքները:

Նոր սահմանադրական մոտեցման հիմքում դրվում է այն գաղափարը, որ պետության հիմնադիրը ժողովուրդն է, իսկ պետական իշխանությունը կրում է ստորադաս բնույթ՝ ենթակա լինելով հանրային վերահսկողության և հաշվետվողականության: Այս տրամաբանությամբ վերաիմաստավորվում են հանրային իշխանության գործունեության չափանիշները՝ առաջնահերթ դարձնելով հանրային հաշվետվողականությունը, պատասխանատվությունը և հանրային շահի գերակայությունը:

Միևնույն ժամանակ, նոր Սահմանադրությունը արտացոլում է հարատև պետության տեսլականը: Այն ուղղված է ոչ միայն ներկա հարաբերությունների կարգավորմանը, այլ նաև երկարաժամկետ կայուն զարգացման ապահովմանը՝ ապագա սերունդների նկատմամբ պատասխանատվության գիտակցմամբ:

Նոր Սահմանադրության ընդունումը նաև ընկալվում է որպես նոր փուլ ազգային ինքնության զարգացման մեջ՝ պետականազուրկ ազգի գործելակերպից դեպի պետականակերտ ժողովրդի գիտակցված վարքագիծ: Այս մոտեցմամբ ձևավորվում է ինքնության նոր ընկալում, ըստ որի՝ պետությունն ու ինքնությունը ոչ միայն փոխկապակցված են, այլև պետությունը ինքնության առանցքն է:

Սահմանադրության նոր մոդելը միաժամանակ ուղղված է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների առավել ամբողջական և կիրառելի համակարգի ձևավորմանը: Այն ոչ միայն ամրագրում է իրավունքները, այլև հստակեցնում է դրանց իրականացման, սահմանափակման և պաշտպանության մեխանիզմները՝ ապահովելով մարդու արժանապատվության և ազատության գերակայությունը: Միևնույն ժամանակ, ընդգծվում է նաև անձի պատասխանատվությունը պետության և հասարակության հանդեպ՝ որպես սահմանադրական համակարգի հավասարակշռության կարևոր բաղադրիչ:

Նոր Սահմանադրությունը նպատակ ունի նաև ավելի հավասարակշռելու իշխանությունների տարանջատման և փոխզսպումների ու հակակշիռների համակարգը: Այն միտված է ուժեղացնելու խորհրդարանական վերահսկողությունը, բարձրացնելու գործադիր իշխանության հաշվետվողականությունը և երաշխավորելու դատական իշխանության անկախությունը և կապը ժողովրդի հետ:

Միաժամանակ, Սահմանադրությունը կարևորում է ժողովրդավարության ինստիտուցիոնալ հիմքերը՝ առանձնացնելով քաղաքական կուսակցությունների և զանգվածային լրատվության միջոցների դերը:

Նոր Սահմանադրությունը նաև Հայաստանի Հանրապետությունը դիրքավորում է որպես Խաղաղության խաչմերուկ՝ խաղաղությունը դարձնելով արտաքին քաղաքական օրակարգի առանցքային խնդիր:

Այսպիսով, նոր Սահմանադրությունը դիտարկվում է որպես համաձայնություն քաղաքացիների միջև, որը պետք է ապահովի պետության՝ որպես խաղաղության, անվտանգության, ազատության, բարեկեցության, ինքնության պաշտպանության և զարգացման, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու գործիքի հետագա զարգացումը:

1. ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Նոր Սահմանադրության նախաբանը ձևակերպվել է այնպես, որ միաժամանակ ունենա սահմանադրական տեքստին անհրաժեշտ արժեհամակարգային խորությունը և լինի հանրության համար ընկալելի: Առաջարկվող նախաբանում առաջնային է ժողովրդի ներկա կամքը և ապագա սերունդների առջև պատասխանատվությունը:

1.2. Նախաբանը ամրագրում է, որ Սահմանադրությունը ժողովրդի ընդհանուր համաձայնությունն է պետության ներքին և արտաքին հարաբերությունների հիմնական սկզբունքների շուրջ: Այս մոտեցումը ժողովրդին վերապահում է երկրում հաստատված իրավակարգի հեղինակի դերակատարում:

1.3. Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունը որպես անկախ, խաղաղ, անվտանգ, զարգացած և բարեկեցիկ պետություն ապագա սերունդներին ժառանգելու հանձնառությունը նախաբանի ռազմավարական բովանդակության արտահայտությունն է՝ ուղղված պետության հարատևության օրակարգին: Այդպիսով ընդգծվում է, որ սահմանադրական կարգավորումները միտված են ոչ միայն ներկայիս հասարակական հարաբերությունների կազմակերպմանը, այլ նաև պետության երկարաժամկետ կայուն զարգացման, սերունդների առջև պատասխանատվության և հանրային համերաշխության ապահովմանը: Ամրագրվում է նաև ժողովրդի կամքը՝ ուղղված ՀՀ միջազգայնորեն ճանաչված տարածքում պետություն կառուցելուն և այդ պետությունը սերնդեսերունդ փոխանցելու հանձնառությունը: Այս առաջարկները նպատակ ունեն նախաբանը և ողջ Սահմանադրությունը դարձնել ավելի գործառութային, արժեքային և կենսունակ:

1.4. Նոր Սահմանադրության առաջին գլուխը կոչվում է «Հիմնարար դրույթներ»: Գլուխը ներկայացված է որպես պետության ինքնության, նպատակների և հանրային իշխանության գործունեության սկզբունքների ամբողջական համակարգ:

1.5. Նոր Սահմանադրության նախագծում առանձին հոդվածով ամրագրվում է Հայաստանի Հանրապետության հիմնադրի և հիմնադրման նպատակի գաղափարը: Ընդգծվում է, որ պետության հիմնադիրը ժողովուրդն է, նշվում են պետության հիմնադրման նպատակները՝ անվտանգություն, ազատություն, բարեկեցություն, ինքնության պաշտպանություն և մարդու իրավունքների և ազատությունների ապահովում:

1.6. Շեշտադրվում է ժողովրդի՝ իշխանության տեր լինելու, իշխանություն կրողի և իշխանության աղբյուրի գաղափարը: Նոր Սահմանադրության նախագծում

տրվում է նաև ժողովրդի սահմանումը որպես քաղաքացիների հավաքական ամբողջություն և ամրագրելով ժողովրդի իշխանության անօտարելիության սկզբունքը:

1.7. Նախատեսվել են նաև կարևոր սկզբունքներ, որոնցով պետք է առաջնորդվեն պետական, տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք: Առաջին գլուխը սահմանում է, թե ինչ արժեքներով և որակական չափանիշներով պետք է գործի հանրային իշխանությունը՝ առաջնորդվել հանրային շահով, հաշվետվողականության, բարեվարքության սկզբունքներով, սահմանափակված լինել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով[1]:

1.8. Նոր Սահմանադրության նախագծում երկրի տնտեսական կարգը ներկայացվում է ոչ միայն որպես շուկայական տնտեսություն և սեփականության ձևերի պաշտպանություն, այլև կապվում է ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական համերաշխության սկզբունքին: Ընդ որում, հատուկ շեշտադրվում է, որ տնտեսական զարգացումը պետական շահ է՝ դրանով առանձնահատուկ կարևորություն հաղորդելով տնտեսական զարգացմանը՝ հանրության և պետության համար կարևոր այլ շահերի համատեքստում[2]: Սահմանադրությունը նաև ամրագրում է, թե ինչ է սոցիալական համերաշխությունը. դա հանրային և անհատական բարեկեցությունը ապահովելու յուրաքանչյուր քաղաքացու անհատական ջանքի քաջալերման և այդ ջանքի արդյունքի վրա հիմնված բարեկեցություն կառուցելու սկզբունքն է: Այսպիսով, տնտեսական կարգը ստանում է ավելի հստակ սոցիալական նպատակադրում:

1.9. Առաջին գլխում տեղ են գտել նաև մի շարք այլ կարևոր նորամուծություններ: Այսպես՝

---

[1] Այս սկզբունքները, բնականաբար, ուղենիշային սկզբունքներ են և չեն բացառում հանրային իշխանության սահմանափակման և հանրային կառավարման այլ սկզբունքների կիրառությունը: Միաժամանակ, դրանք բացարձակ սկզբունքներ չեն, և, ինչպես մարդու հիմնական իրավունքների և ազատությունների դեպքում, այնպես էլ այս սկզբունքների պարագայում կիրառելի պետք է լինի օրենքով նախատեսված դեպքերում դրանց սահմանափակման հնարավորությունը՝ սահմանադրաիրավական չափանիշներին համապատասխան:

[2] Այս և նոր Սահմանադրության նախագծով սահմանված այլ տեղերում պետական շահի առանձնացումը, բնականաբար, չի նսեմացնում այլ պետական շահերի կարևորությունը և չի բացառում այլ պետական շահերի առկայությունը, ինչպիսիք են ժողովրդի անվտանգությունը, ազատությունը, բարեկեցությունը ապահովելու, ինքնությունը պաշտպանելու և զարգացնելու, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու շահերը, ինչպես նաև այլ շահեր, որոնք չնայած չեն հիշատակվում Սահմանադրությամբ, բայց ունեն կարևոր նշանակություն:

1) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը սահմանվել են որպես Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Միջազգային պայմանագրերի գործողության առումով կարևոր հարցն այն է, թե որքանով են դրանք դառնում ներպետական իրավունքի մաս՝ առանց յուրաքանչյուր դեպքում առանձին օրենքի ընդունման անհրաժեշտության: Հարցին, թե վավերացված միջազգային պայմանագրերը ինքնաբերաբար դառնում են ներպետական իրավունքի մաս առանց այն մեր օրենսդրության մեջ տեղայնացնելու, թե՝ ոչ, նոր Սահմանադրության նախագիծը դրական է պատասխանում:

2) Հստակեցվել է զինված ուժերի նպատակը՝ որպես Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանների անխախտելիությունը և անվտանգությունը պաշտպանող ինստիտուտի:

3) Սահմանվել է ընդհանուր կանոն, որ պետական[3] և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև Կառավարության անդամները[4] օրենքով կարող են լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Այդ նպատակով օրենքը ոչ միայն պետք է որոշակի ձևով սահմանի լիազորություն տվող նորմը, այլ նաև հստակ սահմանի լիազորման շրջանակը, այսինքն՝ թե ինչ հարցեր է օրենքը պատվիրակում լուծելու այդ ենթաօրենսդրական ակտով[5]:

---

[3] Միանձնյա ղեկավարվող մարմինների դեպքում այս լիազորությունը ենթադրում է այդ մարմնի ղեկավարի համապատասխան ակտի ընդունում:

[4] Այս տարանջատումը արվել է՝ ընդգծելու համար վարչապետի և փոխվարչապետերի կողմից համապատասխան ակտերի ընդունման հնարավորությունը, քանի որ նախարարների դեպքում կիրագործվի պետական մարմնի (նախարարության) լիազորությունն ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ:

[5] Այս համատեքստում կարևոր է ընդգծել նաև, որ նոր Սահմանադրության նախագծում, որպես ընդհանուր մոտեցում, չեն կրկնվել «մանրամասները սահմանվում են օրենքով» և համանման ձևակերպումները՝ սահմանադրական տեքստն ավելորդ դրույթներով չծանրաբեռնելու նպատակով: Այս մոտեցումը հիմնված է այն կանխավարկածի վրա, որ օրենսդիրն առանց Սահմանադրությամբ յուրաքանչյուր դեպքում առանձին լիազորվելու իրավասու է օրենքով կարգավորելու սահմանադրական դրույթներից բխող հարաբերությունները: Հետևաբար, նման իրավասությունն ամեն անգամ ուղղակիորեն ամրագրելու անհրաժեշտություն չկա: Միաժամանակ, այն դեպքերում, երբ նպատակ է հետապնդվել հատուկ ընդգծել համապատասխան օրենքի ընդունման անհրաժեշտությունը կամ կարևորությունը, ինչպես նաև սահմանադրական կարգավորումն օրենքով լրացնելու նպատակահարմարությունը, նախագծում պահպանվել են համապատասխան հղումները օրենքին: Բացի այդ, նախագծի գրեթե ամբողջ տեքստում հիմնականում այլևս չեն կիրառվում «միայն օրենքով» և համանման ձևակերպումները՝ ելնելով այն մոտեցումից, որ «օրենքով» սահմանվելու պահանջն ինքնին ենթադրում է համապատասխան հարցի կարգավորումը հենց օրենքով: Սա ևս

4) Հայերենը որպես Հայաստանի Հանրապետության պետական լեզու սահմանող սահմանադրական դրույթը նախատեսվել է որպես անփոփոխելի հոդված՝ բացառելով հայերենին փոխարինող այլ պետական լեզվի սահմանադրական ամրագրումը[6]: Միաժամանակ, պետական խորհրդանիշների նկարագրությունը սահմանող օրենքը բարձրացվել է բացառապես հանրաքվեի միջոցով ընդունվող օրենքի մակարդակ:

պայմանավորված է սահմանադրական տեքստի հակիրճությունն ապահովելու և անհարկի կրկնություններից խուսափելու նպատակով:

[6] Նշվածը, իհարկե, չի բացառում օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հասարակական և պետական կյանքում հայերենին զուգահեռ այլ լեզուների գործածման իրավական հնարավորությունը նախատեսելը, այդ թվում՝ պետության ինտեգրացիոն գործընթացների համատեքստում:

2. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Նոր Սահմանադրության նախագծում մարդու և քաղաքացու[7] հիմնական իրավունքների և ազատությունների գլուխը կառուցվել է այնպես, որ արտացոլի մարդու ազատության, պետության պարտականությունների և սահմանադրական սահմանափակումների ամբողջական փիլիսոփայությունը: Գլուխն ունի ավելի համակարգային և մեթոդաբանական կառուցվածք՝ սկզբում ամրագրելով մարդու բարձրագույն արժեք լինելը, այնուհետև ամբողջական տեսքով ներկայացնելով հիմնական իրավունքների միասնական ցանկը, դրանց իրականացման կառուցակարգերը, սահմանափակման ընդհանուր չափանիշները, բացարձակ՝ սահմանափակման ոչ ենթակա իրավունքների շրջանակը և վերջում՝ մարդու և քաղաքացու հիմնական պարտականությունները:

2.2. Մարդու իրավունքների ամբողջ համակարգը բացվում է «մարդը բարձրագույն արժեք է» հիմնարար դրույթով, որն անմիջապես կապվում է մարդու ազատության ընդհանուր բանաձևին՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքին:

2.3. Նախագծում հիմնական իրավունքները միավորված են մեկ համակարգային հոդվածում՝ կյանքի իրավունքից մինչև կրթություն, առողջություն, սոցիալական ապահովություն, ձեռնարկատիրական գործունեություն և այլն: Այս մոտեցումը թույլ է տալիս մարդու իրավունքների ամբողջ շրջանակը տեսնել որպես մեկ միասնական սահմանադրական համակարգ, ոչ թե տարանջատված դրույթների շարք:

2.4. Հաջորդ ամենակարևոր ուղղությունը վերաբերում է նրան, թե ինչպես են Սահմանադրությամբ կարգավորվում մարդու իրավունքների սահմանափակումները: Առաջարկվում է այս հարցը կարգավորել ավելի համակարգված ձևով: Նախ՝ նախատեսվում է հստակ սահմանել այն իրավունքների ցանկը, որոնք բացարձակ են: Դրանք այն իրավունքներն են, որոնք չեն կարող սահմանափակվել որևէ դեպքում, նույնիսկ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ[8]: Բացի այդ,

---

[7] Հանրային ընկալման տեսանկյունից կարևոր է հստակեցնել, որ այն տեղերում, որտեղ Սահմանադրությունը կիրառում է «քաղաքացի» եզրույթը, դա վերաբերում է բացառապես ՀՀ քաղաքացիներին, իսկ այլ դեպքերում կիրառվում է «յուրաքանչյուր ոք» եզրույթը:

[8] Որպես օրինակ՝ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) Ղրղզստանի Սահմանադրության նախագծի վերաբերյալ CDL-AD(2021)007 կարծիքում առաջարկել է բացարձակ իրավունքները հստակ նախատեսել Սահմանադրությամբ (կետ 123) (Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի

նախատեսվում է սահմանել, թե ինչ հիմքերով կարող են սահմանափակվել այն իրավունքները, որոնք բացարձակ չեն[9]: Նախատեսվում է նաև ամրագրել այն հիմնական սկզբունքները, որոնց պետք է համապատասխանի ցանկացած սահմանափակում: Այսինքն՝ եթե որևէ իրավունք կարող է սահմանափակվել, ապա այդ սահմանափակումը պետք է լինի օրինական, հիմնավորված, համաչափ և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում: Այս մոտեցմամբ Սահմանադրության մեջ ավելի հստակ կերևա երկու կարևոր հարց: Առաջին՝ ո՞ր իրավունքներն են բացարձակ և չեն կարող սահմանափակվել որևէ պայմաններում: Երկրորդ՝ ո՞ր իրավունքները կարող են սահմանափակվել և ի՞նչ չափանիշներով: Այդպիսով Սահմանադրության երկրորդ գլուխը չի լինի միայն մարդու իրավունքների թվարկում, այլև կսահմանի այդ իրավունքների սահմանափակման հիմնական կանոնները:

2.5. Բացի այդ, սահմանափակումների թույլատրելիության պայմաններում նախատեսվել է նաև «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» պայմանը, որը բխում է ինչպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10.1-ին հոդվածից, այնպես էլ մի շարք այլ հոդվածներից՝ իրավունքների սահմանափակման մասով:

2.6. Նոր Սահմանադրությամբ առանձին կարգավորվում է նաև մարդու իրավունքների սահմանափակման և իրավունքների չարաշահման արգելքների հարցը: Այս արգելքները պետք է դիտարկել բացարձակ իրավունքների հետ: Այստեղ կարևոր է տարբերակել երկու իրավիճակ: Եթե արգելքը կապված է բացարձակ իրավունքի հետ, ապա այն նույնպես ունի բացարձակ բնույթ: Օրինակ՝ եթե խոսքը վերաբերում է այնպիսի իրավունքի, որը չի կարող սահմանափակվել նույնիսկ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ, ապա այդ իրավունքի հետ կապված արգելքն էլ պետք է համարվի բացարձակ: Իսկ եթե արգելքը կապված է այնպիսի իրավունքի հետ, որը Սահմանադրությամբ կարող է սահմանափակվել,

---

միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Կարծիք Ղրղզստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ, CDL-AD(2021)007, կետ 123):

[9] Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով (GOLDER v. THE UNITED KINGDOM, KHALFAOUI v. FRANCE) կայացրած վճիռներով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանը մի շարք որոշումներով (ՍԴՈ-1767, ՍԴՈ-1515) հստակ նշել են, որ ոչ բացարձակ իրավունքները, որոնց սահմանափակման հիմքերը համապատասխանաբար Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ նախանշված չեն, ենթակա են սահմանափակման ընդհանուր հիմքերով, այդ «սահմանափակումը պետք է լինի օրինական, հետապնդի իրավաչափ նպատակ, չխախտի իրավունքի էությունը և լինի համաչափ»:

ապա այդ արգելքը կարող է ունենալ հարաբերական բնույթ: Այսինքն՝ այն կարող է չկիրառվել այն դեպքերում, երբ համապատասխան իրավունքի սահմանափակումը թույլատրելի է Սահմանադրությամբ: Հետևաբար նոր Սահմանադրության նախագծի 23-րդ հոդվածով նախատեսված արգելքները նույն բնույթը չունեն: Դրանց մի մասը բացարձակ արգելքներ են, երբ կապված են 24-րդ հոդվածի 9-րդ մասում նշված բացարձակ իրավունքների հետ: Մյուս մասը հարաբերական արգելքներ են, երբ կապված են այն իրավունքների հետ, որոնք Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով կարող են սահմանափակվել:

2.7. Հաջորդ էական նորամուծությունը վերաբերում է հիմնական պարտականությունների առանձին և համակարգային ամրագրմանը**:** Նոր Սահմանադրության նախագծում պարտականությունները ներկայացվում են ավելի ամբողջական ձևով՝ Սահմանադրությունը և օրենքները հարգելու, հարկեր վճարելու, շրջակա միջավայրի պահպանության մասին հոգ տանելու, երեխաների դաստիարակության և պետության պաշտպանությանը մասնակցելու պարտավորություններով: Սրանով մարդու իրավունքների գլուխը հավասարակշռվում է նաև քաղաքացու և անհատի սահմանադրական պատասխանատվության տեսանկյունից**:**

2.8. Էական ուղղություն է նաև այն, որ մի շարք տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ միավորվել են մյուս հիմնական իրավունքների հետ 2-րդ գլխում: Նոր Սահմանադրության նախագծով նշված իրավունքներին տրվել է անմիջականորեն գործող սուբյեկտիվ իրավունքի կարգավիճակ, և դրանց բովանդակային տարրերը ներառվել են հիմնական իրավունքների համակարգային կառուցվածքում:

2.9. Ընդհանուր առմամբ, նոր Սահմանադրության նախագծով մարդու իրավունքների գլուխը վերածվել է իրավունքների, սահմանափակումների, դատական երաշխիքների, միջազգային չափանիշների և քաղաքացիական պարտականությունների ամբողջական սահմանադրական ճարտարապետության**:**

2.10. Երկրորդ գլխում տեղ են գտել նաև մի շարք այլ կարևոր նորամուծություններ: Այսպես՝

1) Որդեգրվել է իրավունքների պաշտպանության առավել ընդգրկուն մոտեցում: Օրինակ, հաշվի առնելով Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը, ըստ որի՝ անձնական տվյալներին ծանոթանալու և դրանց շտկում կամ վերացում պահանջելու իրավունքները չպետք է սահմանափակվեն բացառապես պետական

իշխանությունների կողմից ստեղծված տվյալների բազաներով[10], նոր Սահմանադրությունը առաջնորդվում է սուբյեկտային սահմանափակում չնախատեսող ընդհանուր մոտեցմամբ: Սա նպատակ ունի երաշխավորելու անձի իրավունքների պատշաճ պաշտպանությունը ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլև անձնական տվյալներ մշակող մասնավոր կազմակերպությունների հետ հարաբերություններում:

2) Հիմնվելով միջազգային իրավական ակտերի[11], ինչպես նաև մի շարք երկրների փորձի վրա՝ նոր Սահմանադրության նախագծում հստակ ամրագրվել է հիմնական կրթության պարտադիր բնույթը: Նման մոտեցումը ոչ միայն կկանխի կրթության իրավունքի կամայական սահմանափակումները, այլև հիմք կծառայի այնպիսի սոցիալական խնդիրների հասցեագրման համար, ինչպիսիք են մանկական աշխատանքը և վաղ ամուսնությունները՝ ապահովելով կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների իրավունքների կայուն պաշտպանությունը:

3) Նոր Սահմանադրության նախագծում ամրագրվել է մարդու՝ մշակութային կյանքին մասնակցելու և գիտության նվաճումներից օգտվելու ինքնուրույն սուբյեկտիվ իրավունքը: Նոր դրույթի նախատեսումը հնարավորություն կտա ստեղծագործության ազատությանը հաղորդելու համակարգային բնույթ՝ երաշխավորելով հասարակության բոլոր անդամների համար մշակութային արժեքների հասանելիությունը և գիտական առաջընթացի բարիքներից օգտվելու հավասար հնարավորությունը:

4) Հաշվի առնելով մի շարք երկրների փորձը[12] և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով թույլատրելի բացառությունները, նոր

---

[10] Վենետիկի հանձնաժողով, Կարծիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ, CDL-PI(2015)015rev, կետ 45: https://venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm

[11] Միավորված ազգերի կազմակերպություն, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 26(1), Միավորված ազգերի կազմակերպություն, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 13(2):

[12] Կան երկրներ, որոնց սահմանադրություններում ամրագրված է դատական կարգով քաղաքացիությունից զրկման հնարավորություն: Մասնավորապես, Ղազախստանի Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրվում է հետևյալը. «Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունից, քաղաքացիությունը փոխելու իրավունքից և չի կարող արտաքսվել Ղազախստանի տարածքից: Քաղաքացիությունից զրկելը թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ՝ ահաբեկչական հանցագործություններ կատարելու, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետության կենսական շահերին այլ ծանր վնաս պատճառելու հիմքով:»: Հունաստանի Սահմանադրությունում նույնպես ամրագրված է նույնաբովանդակ իրավակարգավորում. «(…) Հունաստանի քաղաքացիությունից զրկելը թույլատրվում է միայն այլ քաղաքացիություն կամավոր

Սահմանադրության նախագծով նախատեսվել է քաղաքացիությունից զրկման հնարավորությունը, սակայն բացառապես դատական կարգով և բացառիկ հիմքերով՝ սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված առավել վտանգավոր հանցագործությունների համար: Նման կարգավորումը թույլ կտա հավասարակշռել անձի՝ քաղաքացիություն ունենալու իրավունքը պետության կենսական շահերի պաշտպանության հրամայականի հետ՝ միաժամանակ ապահովելով դատական վերահսկողության և իրավական որոշակիության անհրաժեշտ երաշխիքները:

5) Համապետական ընտրություններին և հանրաքվեներին մասնակցող անձանց համար քաղաքացիության և տարիքային ցենզից բացի սահմանվել է նաև նստակեցության ցենզ: Նշվածի համար հիմք է ընդունվել նաև Վենետիկի հանձնաժողովի արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ ընտրություններին քվեարկելու իրավունքը կարող է պայմանավորվել բնակության պահանջով, և ինչպես հանձնաժողովն է նշել, նման պահանջի սահմանումը ընտրություններին կամ հանրաքվեներին մասնակցելու համատեքստում կարող է համարվել ինչպես ողջամիտ, այնպես էլ անհրաժեշտ[13]: Ըստ այդմ՝ սահմանվել է, որ ընտրելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունքը, որից օգտվում են միայն 18 տարին լրացած քաղաքացիները, որոնք ընտրությանը կամ հանրաքվեին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում առնվազն մեկ տարի մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում:

6) Տեղական ինքնակառավարման գործընթացներին օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցության արդյունավետությունն ապահովելու նպատակով նույնպես ամրագրվել է նստակեցության ցենզ՝ նախատեսելով ընտրությանը կամ հանրաքվեին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում առնվազն մեկ տարի տվյալ համայնքում մշտապես բնակվելու պահանջ: Այս մոտեցումը հիմնավորվում է Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշմամբ, որը ողջունում է մշտական բնակության ցենզի սահմանումը՝ որպես օտարերկրացիների ներգրավման նախապայման[14]:

կերպով ձեռք բերելու կամ օտարերկրյա պետությունում ազգային շահերին հակասող ծառայություն կատարելու դեպքում՝ օրենքով ավելի կոնկրետ սահմանված պայմաններով և ընթացակարգերով:»:

[13] Ընտրական հարցերի վերաբերյալ լավ պրակտիկայի կանոնագիրք, Ցուցումներ և Բացատրական զեկույց, Ընդունված Վենետիկյան հանձնաժողովի կողմից 52-րդ լիագումար նստաշրջանի ընթացքում, https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2020)031-e:

[14] Ընտրական հարցերի վերաբերյալ լավ պրակտիկայի կանոնագիրք, էջ 6:

7) Ընտրական իրավունքի սահմանափակման հիմքերի վերանայումը պահանջում է հավասարակշռված մոտեցում միջազգային չափորոշիչների և պետական շահերի միջև: Վենետիկի հանձնաժողովի ձևավորված չափորոշիչներում ընտրական իրավունքների սահմանափակումը դիտարկվում է ոչ թե որպես սովորական կամ ընդհանուր կիրառելի միջոց, այլ որպես բացառիկ միջամտություն, որը թույլատրելի է միայն խիստ երաշխիքների առկայության դեպքում: «Ընտրական հարցերի վերաբերյալ լավ պրակտիկայի կանոնագրքում[15]» Վենետիկի հանձնաժողովը սահմանում է, որ անձին ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկելը կարող է նախատեսվել միայն օրենքով, համաչափության սկզբունքի պահպանմամբ, հոգեկան անգործունակության կամ ծանր հանցագործության համար քրեական դատապարտման հիմքով, ընդ որում՝ քաղաքական իրավունքներից զրկումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ: Մոլդովայի վերաբերյալ 2023 թվականի հետագա համատեղ կարծիքում նշվել է, որ ծանր հանցագործությունների համար դատապարտման հիմքով ընտրվելու իրավունքի սահմանափակումը կարող է ծառայել ժողովրդավարական ինստիտուտների և ընտրողների վստահության պաշտպանության նպատակին, եթե ապահովված են օրենքով նախատեսվածությունը, լեգիտիմ նպատակը, համաչափությունը, ընթացակարգային երաշխիքները և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցները: Վենետիկի հանձնաժողովի 2026 թվականի՝ Մոլդովայի վերաբերյալ կարծիքում[16] ևս առանձնացվել է դատական որոշման պահանջի կարևորությունը: Հաշվի առնելով վերոնշյալ չափորոշիչները՝ նոր Սահմանադրության նախագծում ամրագրվել է, որ ընտրելու և ընտրվելու իրավունքները կարող են սահմանափակվել նաև օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով՝ այն անձանց նկատմամբ, որոնք դատապարտվել են սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների, ընտրական բնույթի հանցագործությունների համար[17]: Այս կանոնը կգործի այն կանոնին զուգահեռ, ըստ

---

15 Ընտրական հարցերի վերաբերյալ լավ պրակտիկայի կանոնագիրք, I.1.1.d, կետեր i–v e, Explanatory Report, §6 :

16 Moldova Opinion on Law No. 100/2025, CDL-AD(2026)007, §46:

17 ՀՀ քրեական օրենսգրքով սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից են, օրինակ, պետական դավաճանությունը, իշխանությունը յուրացնելը, սահմանադրական կարգը տապալելը, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ ինքնիշխանությունից հրաժարվելուն ուղղված գործողությունները, այդպիսի գործողությունների հրապարակային կոչերը, լրտեսությունը և դիվերսիան: Ընտրական բնույթի հանցագործություններից են, մասնավորապես, ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը խոչընդոտելը, քարոզչություն կատարելուն կամ դրանից հրաժարվելուն հարկադրելը, ընտրությունների կամ քվեարկության արդյունքները

որի՝ ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

8) Հիմք ընդունելով միջազգային չափորոշիչները[18] և փորձը՝ նոր Սահմանադրության նախագծով ընդլայնվել է պարտադիր չհամարվող աշխատանքների շրջանակը՝ դրանում ներառելով նաև ռազմական դրության պայմաններում կատարվող անհրաժեշտ աշխատանքները, ինչպես նաև վերանայվել է երեխաների աշխատանքային իրավունքների կարգավորման մոտեցումը: Մասնավորապես, շեշտադրվել են աշխատաժամանակի սահմանափակումն ու նվազագույն տարիքի հստակեցումը[19], որոնք թույլ կտան ապահովել երեխաների ներգրավումն աշխատանքային հարաբերություններում՝ բացառապես նրանց առողջության, անվտանգության, կրթության և բնականոն զարգացման առաջնահերթ պաշտպանության երաշխավորմամբ:

9) Միջազգային հիմնարար փաստաթղթերը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը[20], Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը[21] և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան[22], պարտավորեցնում են պետությանը ոչ միայն հարգել ու պաշտպանել, այլև ապահովել առողջության ըստ հնարավորին բարձր մակարդակի հասանելիություն՝ ստեղծելով արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման համակարգ[23]: Հետևաբար, սահմանադրական մակարդակով

կեղծելը, մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը, կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ իրացնելը, ընտրակաշառք ստանալը, ընտրակաշառք տալը, ընտրակաշառքի միջնորդությունը, ինչպես նաև հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը:

18 Միավորված ազգերի կազմակերպություն, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 8(3), Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Նվազագույն տարիքի մասին կոնվենցիա, հոդված 2(3), Միավորված ազգերի կազմակերպություն, Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 32:

19 Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Նվազագույն տարիքի մասին կոնվենցիա, հոդված 3(1):

20 Միավորված ազգերի կազմակերպություն, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 25:

21 Միավորված ազգերի կազմակերպություն, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 12:

22 Եվրոպայի խորհուրդ, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, հոդվածներ 11 և 13:

23 ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 14. Առողջության հնարավորինս բարձր մակարդակի իրավունքը, կետեր 8, 9, 33:

ամրագրվել է բժշկական ծառայությունների հասանելիության սկզբունքը՝ պետության կողմից իր պոզիտիվ պարտականությունների պատշաճ կատարման համար[24]:

10) Սոցիալական ապահովության իրավունքի ամրագրումը բխում է այն հանգամանքից, որ Հայաստանը սոցիալական պետություն և շուկայական տնտեսություն ունեցող պետություն է: Միջազգային փաստաթղթերը[25] այս իրավունքը դիտարկում են որպես մարդկային արժանապատվության երաշխավորման և նվազագույն կենսամակարդակի ապահովման պոզիտիվ պարտավորություն[26]: Թեև 2015 թ. փոփոխություններով այս իրավունքը հիմնական իրավունքների շարքից տեղափոխվել է պետության քաղաքականության նպատակների դաշտ, սակայն Սահմանադրական դատարանի դիրքորոշումները[27] և միջազգային ստանդարտները[28] փաստում են, որ պետությունը պարտավոր է ձեռնարկել պրոգրեսիվ քայլեր՝ գործարկելով բավարար, բոլորին հասանելի և հիմնական սոցիալական ռիսկերը ծածկող համակարգեր: Հետևաբար, նոր Սահմանադրության նախագծով սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես մարդու հիմնական իրավունք:

11) Հողի սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված դրույթը նպատակաուղղված է հողի՝ որպես հանրային հարստության և սահմանափակ ռեսուրսի նկատմամբ պետական վերահսկողության պահպանմանը և օտարերկրյա սուբյեկտների ձեռքում դրա կենտրոնացման կանխմանը: Որպեսզի հնարավոր չլինի միայն օտարերկրյա ֆիզիկական անձանց վրա տարածվող արգելքը շրջանցել օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձանց կողմից հողի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու միջոցով, նոր Սահմանադրության նախագիծը թույլ է տալիս օրենքով սահմանափակել նաև այն իրավաբանական անձանց սեփականության իրավունքը, որոնցում առկա է օտարերկրյա ուղղակի կամ

---

[24] ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 3. Պետությունների պարտավորությունների բնույթը, կետեր 2, 3, 9:

[25] Միավորված ազգերի կազմակերպություն, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 22, Միավորված ազգերի կազմակերպություն, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 9:

[26] Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարան, վճիռ, 9 փետրվարի 2010 թ., 1 BvL 1/09, կետեր 133–145, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 19. Սոցիալական ապահովության իրավունք, էջ 2:

[27] ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թ. ապրիլի 2-ի թիվ ՍԴՈ–1142 որոշում:

[28] ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 3, կետեր 2–3, Եվրոպայի խորհուրդ, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, հոդվածներ 12–15:

անուղղակի մասնակցություն[29]: Սա հնարավորություն կտա կանխելու սահմանադրական արգելքի հնարավոր շրջանցումները և երաշխավորելու հողային ֆոնդի, հատկապես՝ գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ պաշտպանությունը:

12) Թեև Հայաստանում գործում է եռաստիճան դատական համակարգ, սակայն միջազգային առաջադեմ փորձը և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականները[30] փաստում են, որ բողոքարկման իրավունքը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել որոշակի կատեգորիայի, ինչպես օրինակ՝ փոքր պահանջների կամ պարզ իրավական բնույթի վեճերի դեպքում: Մի շարք երկրների սահմանադրական մոդելներ[31] թույլատրում են օրենքով նախատեսված բացառություններ սահմանել բողոքարկման իրավունքից: Նոր Սահմանադրության նախագծում ամրագրվում է բողոքարկման իրավունքից բացառություններ սահմանելու հնարավորություն՝ չխախտելով դատական պաշտպանության իրավունքի էությունը:

13) Նոր Սահմանադրության նախագծում ամրագրվել է գրավոր ընթացակարգի կիրառման հնարավորությունը՝ անհրաժեշտ իրավական հիմքեր նախատեսելով օրենսդրությամբ համապատասխան կառուցակարգեր նախատեսելու համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը[32] և միջազգային փորձը, մասնավորապես՝ Ավստրիայի ու Չեխիայի սահմանադրական մոտեցումները, փաստում են, որ բանավոր լսումների իրավունքը բացարձակ չէ, և գրավոր ընթացակարգը կարող է դիտարկվել որպես արդար դատաքննության լեգիտիմ բաղադրատարր, հատկապես այն գործերով, որոնք վերաբերում են բացառապես իրավական հարցերի:

---

29 Օրինակ, Իսլանդիայում սահմանափակումները տարածվում են ընդհանուր «օտարերկրյա կողմերի» վրա, տե՛ս Իսլանդիայի Սահմանադրություն, հոդված 72, հասանելի է https://www.constituteproject.org/constitution/Iceland_2013:

30 Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտե, դատական արդյունավետության վերաբերյալ փաստաթղթեր: Հասանելի է՝ https://rm.coe.int/168050e7e4 https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505f3c

31 Օրինակ՝ Խորվաթիայի, Կոլումբիայի և Ալբանիայի դեպքում:

32 Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Jussila v. Finland, վճիռ, կետեր 40–45: Հասանելի է՝ https://hudoc.echr.coe.int

14) Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները[33] փաստում են, որ այս սկզբունքի սահմանադրականացումն առավելապես արդարացված է քրեական իրավունքի շրջանակներում՝ անձին իր վարքագծի հետևանքների մասին կանխատեսելի տեղեկատվություն ապահովելու համար: Հիմնվելով Չեխիայի, Վրաստանի և Էստոնիայի սահմանադրական փորձի վրա, որոնք ամրագրում են բարենպաստ ակտի հետադարձ ուժի կանխավարկածը բացառապես քրեաիրավական ոլորտում, ինչպես նաև հաշվի առնելով Սլովենիայի մոտեցումը հանրային շահից բխող բացառությունների վերաբերյալ՝ նոր Սահմանադրության նախագծով հստակեցվել են հետադարձ ուժի արգելքի սահմանները: Սահմանադրական մակարդակով ամրագրվում է, որ արարքի հանցավորությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը միշտ ունի հետադարձ ուժ, մինչդեռ այլ ոլորտներում օրենսդրին հնարավորություն է տրվում ավելի ճկուն կերպով կարգավորելու հետադարձության հարցը, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հանրության շահերի պաշտպանության համար:

15) Ելնելով այն կանխավարկածից, որ Սահմանադրությունը պետք է բովանդակի բացառապես հիմնարար և ընդհանուր սկզբունքներ, նոր Սահմանադրության տեքստով առաջարկվում է հրաժարվել մեղքի և պատժի համաչափության դրույթի սահմանադրական պրակտիկայից՝ դրա իրավական կարգավորումը թողնելով օրենսդրությանը: Քրեական պատասխանատվությունը առաջանում է միայն այն դեպքում, երբ առկա են հանցագործության բոլոր տարրերը: Մինչդեռ մեղքը այս ամբողջ համակարգում միայն մեկ տարր է: Հետևաբար, եթե Սահմանադրության մակարդակով առանձնացվում է միայն մեղքը, իսկ մյուս տարրերը չեն արտացոլվում, դա կարող է առաջացնել համակարգային անհամապատասխանություն և իրավական անհավասարակշռություն: Միջազգային փորձի ուսումնասիրությունը, մասնավորապես՝ Գերմանիայի, Ֆրանսիայի և մի շարք այլ երկրների օրինակով, փաստում է, որ պետություններն առավելապես հակված են այս սկզբունքների օրենսդրական, այլ ոչ թե սահմանադրական կարգավորմանը:

16) Նոր Սահմանադրության նախագծով իրականացվել է իրավական նորմերի օպտիմալացում, որի շրջանակներում առանձին ոլորտային կամ մասնակի

---

[33] Վենետիկի հանձնաժողով, Իրավունքի գերակայության վերաբերյալ զեկույց, CDL-AD(2011)003rev:
Հասանելի է՝ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2011)003rev-e
Վենետիկի հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ առաջին կարծիք, CDL-AD(2015)037-e, կետ 59:
Հասանելի է՝ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)037-e

կարգավորումներ նոր բովանդակություն են ստացել, քանի որ դրանց բովանդակությունը լիարժեքորեն ներառվում է համապատասխան համընդհանուր սահմանադրական սկզբունքների և իրավունքների ընդհանուր սահմանադրաիրավական կարգավորումներում: Օրինակ՝ խտրականության արգելքը ենթադրում է նաև սեռի հիմքով որևէ տարբերակման բացառում, հետևաբար, կնոջ և տղամարդու իրավահավասարության վերաբերյալ առանձին դրույթի առկայության անհրաժեշտությունը հիմնավորված չէ: Իրականացվել է նաև եզրույթների միասնականացում, մի շարք հոդվածներում ապահովվել է իրավական որոշակիություն՝ ներկայում գործածվող տարբերակված եզրույթները փոխարինելով միասնական միջազգայնորեն ընդունված հասկացություններով:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

3.1. Նոր Սահմանադրության նախագծում կուսակցություններին և զանգվածային լրատվության միջոցներին վերաբերող կարգավորումները առանձնացվել են ինքնուրույն գլխում, որն ունի ոչ միայն կառուցվածքային, այլ նաև հայեցակարգային նշանակություն: Կուսակցություններն ու զանգվածային լրատվության միջոցները ներկայացվում են որպես ժողովրդավարական համակարգի առանձին ինստիտուցիոնալ հենասյուներ: Այս մոտեցումը նպատակ ունի ավելի հստակ ընդգծելու, որ կուսակցությունները և զանգվածային լրատվամիջոցները ժողովրդավարական պետության և հասարակության հիմնական կառուցակարգերից են: Ընդ որում, առանձնացված գլխում առկա այն կարգավորումների նկատմամբ, որոնք իրենց էությամբ մարդու իրավունքների և ազատությունների դրսևորումներ են, կիրառվելու են նոր Սահմանադրության 2-րդ գլխով սահմանված՝ իրավունքներին և ազատություններին վերաբերող ընդհանուր կարգավորումները, ներառյալ՝ իրավունքների և ազատությունների իրականացման կառուցակարգերը և սահմանափակումները՝ կիրառելի մասով: Ըստ այդմ էլ հստակեցվել է, որ այս գլխով նախատեսված իրավունքները և ազատությունները մարդու հիմնական իրավունքներ և ազատություններ են:

3.2. Երկրորդ էական նորամուծությունը վերաբերում է կուսակցությունների ներքին ժողովրդավարության պահանջների հստակեցմանը: Մասնավորապես, նոր Սահմանադրության նախագծով սահմանվում է, որ կուսակցություններում պետք է գործեն կուսակցական մարմինների ձևավորման ընտրական համակարգեր: Այս ձևակերպմամբ ժողովրդավարական սկզբունքը վերածվում է կոնկրետ կազմակերպական պարտավորության: Նման մոտեցումը միտված է ամրապնդելու կուսակցությունների ներսում հաշվետվողականությունը, ղեկավար մարմինների ձևավորման լեգիտիմությունը և ներքին բազմակարծության մեխանիզմները:

3.3. Երրորդ կարևոր նորամուծությունը կուսակցությունների ֆինանսավորմանը վերաբերող կարգավորումների նախատեսումն է: Նոր նախագծով սահմանվում է, որ կուսակցությունները գործում են ֆինանսական թափանցիկության սկզբունքով, ինչպես նաև կարող են նվիրատվություններ ստանալ քաղաքացիներից և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով ֆինանսավորվել պետական բյուջեից: Կարգավորման նպատակը կուսակցական համակարգի նկատմամբ հանրային վստահության բարձրացումն է:

3.4. Չորրորդ կարևոր ուղղությունը զանգվածային լրատվության միջոցների վերաբերյալ առանձին սահմանադրական կարգավորումների նախատեսումն է: Նոր նախագծով պետությունը ոչ միայն երաշխավորում է զանգվածային լրատվամիջոցների գործունեության ազատությունը, այլ նաև այս ամբողջ ինստիտուտը դուրս է բերվում բացառապես արտահայտվելու ազատության շրջանակից և ներկայացվում որպես ժողովրդավարական հասարակության ինքնուրույն ինստիտուտ: Այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից սահմանադրական ժողովրդավարություններում ԶԼՄ-ները կատարում են ոչ միայն տեղեկատվության տարածման, այլև հանրային վերահսկողության, հաշվետվողականության և հանրային բանավեճի ձևավորման առանցքային գործառույթներ: Միաժամանակ, հաշվի առնելով ԶԼՄ-ների կարևոր դերը հանրային կարծիքի ձևավորման և հանրային հաշվետվողականության տեսանկյունից, նրանց դեպքում ևս սահմանադրական մակարդակով սահմանվել է ֆինանսական թափանցիկության պայմաններում գործելու սկզբունքը:

3.5. Ընդհանուր առմամբ, նոր Սահմանադրության նախագծի երրորդ գլուխը կուսակցությունների և զանգվածային լրատվության միջոցների կարգավորումը տեղափոխում է առավել ինստիտուցիոնալ հարթություն:

3.6. Վերոնշյալից բացի, կուսակցություններին վերաբերող կարգավորումների համատեքստում վերանայվել են նաև կուսակցությունների գործունեությունն արգելելու հիմքերը: Ժողովրդավարական պետության հիմքում ընկած են ժողովրդի ազատ կամքի ձևավորումն ու արտահայտումը: Քաղաքական կուսակցությունները, հանդիսանալով քաղաքացիների քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման հիմնական ինստիտուցիոնալ հարթակներից մեկը, պարտավոր են իրենց գործունեությունն իրականացնել այնպես, որ չխաթարեն ընտրողի ազատ կամքի արտահայտումը, քաղաքական մրցակցության արդարությունը և ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը: Ընտրողի ազատ կամքի խաթարումը, այդ թվում՝ ընտրակաշառքի, նյութական կամ այլ շահագրգռման, կախվածության ստեղծման, ընտրողի նկատմամբ կազմակերպված ճնշման, միջնորդավորված ազդեցության, քողարկված ֆինանսական մեխանիզմների կամ այլ անթույլատրելի միջոցներով, ուղղակիորեն խեղաթյուրում է ընտրությունների ժողովրդավարական բովանդակությունը: Նման վարքագիծը, եթե դառնում է կուսակցական գործունեության մեխանիզմ կամ համակարգային քաղաքական գործելակերպ, այլևս չի կարող դիտարկվել միայն որպես առանձին ընտրական խախտում, այլ պետք է գնահատվի որպես

ժողովրդավարական կարգի, քաղաքական բազմակարծության և ժողովրդի իշխանության ազատ իրացման դեմ ուղղված վտանգ:

3.7. Վենետիկի հանձնաժողովը Մոլդովայի վերաբերյալ կարծիքներից մեկում արձանագրել է, որ կուսակցության արգելման հարցում պետությունը պետք է հստակ կապ հաստատի կուսակցության գործունեության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավաչափ նպատակների միջև: Նույն կարծիքում նշվել է, որ Սահմանադրական դատարանը կարող է գնահատել՝ արդյոք կուսակցությունը խաբեության, վստահության չարաշահման, փողերի լվացման կամ այլ ենթադրյալ հանցավոր մեխանիզմների միջոցով գործել է քաղաքական բազմակարծությունն ու ժողովրդավարական արժեքները վնասելու նպատակով[34]:

3.8. Այս մոտեցումը կիրառելի է նաև ընտրողի ազատ կամքի խաթարման հիմքով կուսակցության գործունեության արգելման դեպքում. եթե ապացուցվում է, որ կուսակցության գործունեությունը կազմակերպված կամ համակարգային կերպով ուղղված է եղել ընտրողների ազատ կամարտահայտության խեղաթյուրմանը, ապա այդ գործունեությունը կարող է գնահատվել ոչ միայն որպես ընտրական օրենսդրության խախտում, այլև որպես ժողովրդավարական ընտրությունների ամբողջականության և քաղաքական մրցակցության արդարության դեմ ուղղված վարքագիծ:

3.9. Մյուս կողմից, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունն ու օրինականությունը ազատ և արդար ընտրությունների անհրաժեշտ նախապայմաններից են: Օտարերկրյա պետության, օտարերկրյա իրավաբանական անձի կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից կուսակցության ֆինանսավորումը կարող է ստեղծել ներքին քաղաքական գործընթացների վրա արտաքին ազդեցության, քաղաքական մրցակցության անհավասարության և ընտրողի կամքի ձևավորման վրա ոչ թափանցիկ ազդեցության ռիսկեր:

3.10. Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Քաղաքական կուսակցությունների կարգավորման համատեղ ուղեցույցներում արձանագրված է, որ ազգային օրենսդրությունը կարող է արգելել քաղաքական կուսակցություններին

---

[34] Տե՛ս European Commission for Democracy through Law (Venice Commission), Republic of Moldova. Amicus Curiae Brief for the Constitutional Court of the Republic of Moldova on Declaring a Political Party Unconstitutional, CDL-AD(2022)051, adopted at the 133rd Plenary Session, կետ 54, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282022%29051:

օտարերկրյա աղբյուրներից նվիրատվություններ ստանալը: Նման սահմանափակման նպատակը օտարերկրյա շահերի, այդ թվում՝ օտարերկրյա կառավարությունների, ներքին քաղաքական գործընթացների վրա անթույլատրելի ազդեցությունից խուսափելն է և քաղաքական կուսակցությունների անկախության ամրապնդումը[35]:

3.11. Վենետիկի հանձնաժողովը օտարերկրյա աղբյուրներից քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման արգելքի վերաբերյալ իր կարծիքում նշել է, որ նման արգելքը կարող է համարվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, եթե օտարերկրյա ֆինանսավորումն օգտագործվում է Սահմանադրության կամ օրենքների հետ անհամատեղելի նպատակների համար, խաթարում է քաղաքական մրցակցության արդարությունը կամ ամբողջականությունը, հանգեցնում է ընտրական գործընթացի խեղաթյուրման կամ վտանգում է պետության տարածքային ամբողջականությունը[36]: Նույն կարծիքում Վենետիկի հանձնաժողովը կարևորել է յուրաքանչյուր դեպքի առանձին գնահատումը՝ հաշվի առնելով տվյալ պետության քաղաքական համակարգը, սահմանադրական արժեքները, հարևանների հետ հարաբերությունները, կուսակցությունների ֆինանսավորման ընդհանուր համակարգը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի պահանջները: Այս մոտեցումը կարևոր երաշխիք է, որպեսզի օտարերկրյա ֆինանսավորման հիմքով կուսակցության գործունեության արգելումը չդառնա ավտոմատ կամ ձևական հետևանք, այլ կիրառվի միայն այն դեպքում, երբ օտարերկրյա ֆինանսավորումը իր բնույթով, ծավալով կամ նպատակով իրական վտանգ է ստեղծում ժողովրդավարական գործընթացների համար[37]:

3.12. Մոլդովայի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքում ևս ընդգծվել է, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետությունների զգայունությունը արտաքին քաղաքական ազդեցության նկատմամբ հասկանալի է, և Սահմանադրական դատարանը, օրինակ, պետք է գնահատի՝ արդյոք արտերկրից

---

35 Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR, Guidelines on Political Party Regulation, 2nd edition, CDL-AD(2020)032, կետ 229, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282020%29032-e:

36 Տե՛ս European Commission for Democracy through Law (Venice Commission), Opinion on the Prohibition of Financial Contributions to Political Parties from Foreign Sources, CDL-AD(2006)014, adopted at the 66th Plenary Session (Venice, 17-18 March 2006), կետ 33, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282006%29014-e:

37 Տե՛ս նույն տեղում, կետեր 13-15 և 34, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282006%29014-e:

աջակցություն ստացած կուսակցությունը ընտրարշավում ստացել է անհիմն մրցակցային առավելություն այլ ազգային կուսակցությունների նկատմամբ, կամ արդյոք այդ աջակցությունը վտանգ է ներկայացնում պետության անկախության, ինքնիշխանության կամ տարածքային ամբողջականության համար[38]: Հանձնաժողովը նույն համատեքստում նշել է, որ երկրի ընդհանուր իրավիճակը կարևոր գործոն է գնահատելու համար՝ արդյոք կուսակցությունն օգտագործել է ոչ պատշաճ կամ անօրինական միջոցներ՝ ընտրողներին այլ կուսակցություններից հեռացնելու, քաղաքական մրցակցության արդարությունը կամ ամբողջականությունը խաթարելու, ինչպես նաև չթույլատրված օտարերկրյա ֆինանսավորմամբ ձեռք բերված անհիմն առավելության միջոցով ընտրական գործընթացը խեղաթյուրելու նպատակով:

3.13. Ամեն դեպքում, կուսակցության գործունեության արգելումը պետք է դիտարկվի որպես բացառիկ և վերջին միջոց: Վենետիկի հանձնաժողովի «Քաղաքական կուսակցությունների արգելման և լուծարման, ինչպես նաև համանման միջոցների կիրառման ուղեցույցներում» արձանագրված է, որ կուսակցությունների արգելումը կամ հարկադիր լուծարումը, լինելով հեռուն գնացող միջոց, պետք է կիրառվի առավելագույն զսպվածությամբ: Մինչև նման միջոցի կիրառման հարցով իրավասու դատական մարմին դիմելը պետությունը պետք է գնահատի՝ արդյոք կուսակցությունն իրական վտանգ է ներկայացնում ազատ և ժողովրդավարական քաղաքական կարգի կամ անձանց իրավունքների համար, և արդյոք այդ վտանգը հնարավոր չէ կանխել ավելի մեղմ միջոցներով:[39]

3.14. Նույն ուղեցույցներով սահմանված է, որ կուսակցությունների արգելումը կամ հարկադիր լուծարումը պետք է լինի հակասահմանադրականության վերաբերյալ դատական եզրակացության հետևանք, կրի բացառիկ բնույթ, ենթարկվի համաչափության սկզբունքին և հիմնված լինի բավարար ապացույցների վրա, որ կուսակցությունը որպես կազմակերպություն, այլ ոչ թե միայն նրա առանձին անդամները, հետապնդում է հակասահմանադրական նպատակներ կամ օգտագործում է հակասահմանադրական միջոցներ: Կուսակցության արգելման կամ

---

38 Տե՛ս European Commission for Democracy through Law (Venice Commission), Republic of Moldova. Amicus Curiae Brief for the Constitutional Court of the Republic of Moldova on Declaring a Political Party Unconstitutional, CDL-AD(2022)051, կետ 55, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282022%29051:

39 Տե՛ս European Commission for Democracy through Law (Venice Commission), Guidelines on Prohibition and Dissolution of Political Parties and Analogous Measures, CDL-INF(2000)001, guidelines 5-7, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-INF%282000%29001-e:

լուծարման հարցը պետք է որոշվի Սահմանադրական դատարանի կամ այլ համապատասխան դատական մարմնի կողմից՝ պատշաճ ընթացակարգի, հրապարակայնության և արդար դատաքննության երաշխիքների ապահովմամբ:

3.15. Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ միավորման ազատության սահմանափակումները պետք է հավասարակշռվեն ժողովրդավարական բազմակարծության պահանջների հետ: Միևնույն ժամանակ, պետությունը կարող է միջոցներ ձեռնարկել, որ միավորումը չհետապնդի այնպիսի քաղաքական նպատակներ, որոնք հակասում են բազմակարծական ժողովրդավարության արժեքներին և խախտում են Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները: Հանձնաժողովը նույն պարբերությունում որպես իրավաչափ նպատակ է դիտարկել այնպիսի կուսակցությունների վերահայտնման կանխումը, որոնք կարող են սպառնալ ժողովրդավարական գործընթացներին կամ դառնալ ապօրինի ֆինանսավորման, արտաքին միջամտության կամ ընտրակաշառքի գործիք[40]: Այդուհանդերձ, Վենետիկի հանձնաժողովը նույն կարծիքում շեշտել է, որ սահմանափակումը պետք է լինի անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, համապատասխանի հրատապ հասարակական պահանջին և լինի համաչափ հետապնդվող իրավաչափ նպատակին: Ազգային մարմինները պետք է ընտրեն ամենաքիչ սահմանափակող միջոցը, իսկ առավել խիստ միջոցները, այդ թվում՝ կուսակցության լուծարումը կամ արգելումը, կիրառեն միայն առավել լուրջ հանգամանքներում և որպես վերջին միջոց՝ ապացուցելով, որ նույն նպատակին հնարավոր չէ հասնել իրավունքին պակաս միջամտող միջոցներով: Ֆինանսավորման խախտումների կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ ուղեցույցները ևս պահանջում են ճկուն և համաչափ պատժամիջոցներ: Ֆինանսավորման ոլորտում խախտման գնահատման ժամանակ պետք է հաշվի առնվեն ներգրավված գումարի չափը, խախտումը թաքցնելու փորձերը և խախտման կրկնվող բնույթը: Միաժամանակ, օտարերկրյա ֆինանսավորման դեպքերում լուրջ խախտումները կարող են առնչվել ազգային անվտանգությանը[41]:

---

[40] Տե՛ս European Commission for Democracy through Law (Venice Commission), Republic of Moldova. Amicus Curiae Brief on the Status of, and the Measures Concerning, Successor Parties of Political Parties Declared Unconstitutional, CDL-AD(2026)006, adopted at the 146th Plenary Session (Venice, 6-7 March 2026), կետեր 32-34, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282026%29006-e:

[41] Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR, Guidelines on Political Party Regulation, 2nd edition, CDL-AD(2020)032, կետեր 280-281, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282020%29032-e:

3.16. Վերոնշյալի հաշվառմամբ՝ նոր Սահմանադրության նախագծով որպես Սահմանադրական դատարանի որոշմամբ կուսակցության գործունեությունը արգելելու հիմք նախատեսվել են այն դեպքերը, երբ կուսակցության գործունեությունն ուղղված է ընտրողի ազատ կամքի արտահայտումը խաթարելուն, կամ եթե կուսակցությունը ստացել է օտարերկրյա ֆինանսավորում: Որպես առանձին հիմք սահմանվել է նաև պետության անկախությունից հրաժարվելու քարոզի իրականացումը՝ որպես սահմանադրական կարգի տապալմանը համարժեք՝ պետության հիմքերը խարխլող գործունեություն: Առաջարկվող կարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ ազատ և արդար ընտրությունների, ընտրողների ազատ կամարտահայտության, քաղաքական բազմակարծության, քաղաքական մրցակցության հավասարության, կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության, պետության ինքնիշխանության և ժողովրդավարական կարգի պաշտպանությունը:

4. ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

4.1. Նոր Սահմանադրության նախագծի 4-րդ գլուխը, որը վերաբերում է օրենսդիր իշխանությանը, մի շարք առանցքային հարցերում առաջարկում է խորհրդարանի դերի բարձրացմանը և խորհրդարանական վերահսկողության ուժեղացմանը միտված լուծումներ:

4.2. Նախ վերանայվել է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման մեխանիզմը: Նոր Սահմանադրության նախագծի առաջարկվող կարգավորումը կառուցված է այն տրամաբանությամբ, որ խորհրդարանական մեծամասնության բացակայությունը նախ և առաջ պետք է լուծվի քաղաքական գործընթացների՝ ընտրությունների և կոալիցիոն բանակցությունների միջոցով: Այդ նպատակով նախատեսվում է, որ առաջին ընտրությունների արդյունքներով մեծամասնություն չձևավորվելու դեպքում նորընտիր Ազգային ժողով չի կազմավորվում, և անցկացվում են նոր ընտրություններ՝ հնարավորություն տալով քաղաքական համակարգին վերաձևավորվելու և ընտրողներին՝ վերագնահատելու իրենց ընտրությունը: Այս մոտեցումը համահունչ է խորհրդարանական համակարգերի միջազգային փորձին, որտեղ կառավարություն ձևավորելու անհնարինության դեպքում կիրառվում են նոր ընտրությունների կամ այլընտրանքային քաղաքական լուծումների մեխանիզմներ: Այս համակարգը կապահովի առավելագույն ազատ և մրցակցային ընտրություններ, ինչպես նաև նոր Կառավարություն ձևավորելու մեխանիզմ կլինի այն դեպքում, եթե երկու անգամ ընտրություններ անցկացնելուց հետո մեծամասնություն չձևավորվի:

4.3. Միաժամանակ, առաջարկվող տարբերակը նախատեսում է նաև կայունության ապահովման երաշխիքներ՝ թույլատրելով կայուն մեծամասնության ձևավորման մեխանիզմների կիրառումը միայն այն դեպքում, երբ բազմակի ընտրություններից հետո ևս չի հաջողվում ձևավորել Կառավարություն: Այսպիսով, ապահովվում է հավասարակշռություն ժողովրդավարական ներկայացուցչության և կառավարման արդյունավետության միջև՝ մի կողմից առավելագույնս հարգելով ընտրողների կամահայտնությունը, իսկ մյուս կողմից՝ կանխելով կառավարման տևական փակուղիները: Բացի այդ, 2/3-ից ավելի մանդատներ ստանալու դեպքում փոքրամասնությանը լրացուցիչ մանդատների տրամադրումը ուղղված է խորհրդարանական բազմակարծության պահպանմանը և հակակշիռների արդյունավետ համակարգի ձևավորմանը:

4.4. Հետևաբար առաջարկվող կառուցակարգը կվերականգնի համամասնական ընտրակարգի սկզբունքային տրամաբանությունը՝ նվազեցնելով

արհեստական միջամտությունը մանդատների բաշխման գործընթացին և ուժեղացնելով ընտրությունների արդյունքների անմիջական ազդեցությունը քաղաքական իշխանության ձևավորման վրա:

4.5. Երկրորդ կարևոր ուղղությունը վերաբերում է խորհրդարանական վերահսկողության ինստիտուտների ուժեղացմանը: Իշխանությունների տարանջատման ու դրանց միջև փոխզսպումների ու հակակշիռների համակարգի ամրապնդման համատեքստում առանցքային նշանակություն է ստանում Ազգային ժողովի լիազորությունների և մասնավորապես վերահսկողական գործիքակազմի ընդլայնումը: Նոր Սահմանադրության նախագծով առաջարկվող լուծումները հնարավորություն կստեղծեն ուժեղացնելու գործադիր իշխանության ժողովրդավարական հաշվետվողականությունը, բարելավել առանցքային քաղաքական որոշումների կայացման որակը:

4.6. Խորհրդարանի վերահսկողական և այլ լիազորությունների ընդլայնմանն ուղղված կարգավորումների շարքում նախատեսվել են Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի կողմից Կառավարության անդամի և դիվանագիտական ներկայացուցչի թեկնածուի վերաբերյալ եզրակացության տրամադրման, ինչպես նաև նրանց անվստահություն հայտնելու կառուցակարգեր:

4.7. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում փոխվարչապետների, նախարարների, դիվանագիտական ներկայացուցիչների թեկնածությունների քննարկումը ունի վերջիններիս անցած ճանապարհը բացահայտելու, պաշտոնի նշանակման թափանցիկությունը ապահովելու նպատակ[42]: Առնվազն հանրության առջև թափանցիկության տեսանկյունից կարևոր է անձին հանձնաժողով հրավիրելը, որտեղ բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները հնարավորություն կունենան հարցեր տալու, բացահայտելու թեկնածուների կենսագրության հետ կապված առանձին դրվագներ, քննարկելու բարեվարքությունը և այլն: Փոխվարչապետների, նախարարների և դիվանագիտական ներկայացուցիչների թեկնածությունները նախապես քննարկվում են հանձնաժողովների հրապարակային նիստում, և հանձնաժողովի եզրակացությունը ներկայացվում է վարչապետին: Թեև եզրակացությունը խորհրդատվական է, այն ուժեղացնում է խորհրդարանի քաղաքական վերահսկողության և հրապարակային հաշվետվողականության գործառույթը:

---

42 Դիվանագիտական ներկայացուցչների խորհրդարանական հատատման ինստիտուտը գործում է, օրինակ, ԱՄՆ-ում, Բրազիլիայում, Ինդոնեզիայում, Քենիայում, Վրաստանում, Մալդիվներում, Ղրղզստանում, Մոնղոլիայում:

4.8. Նույն տրամաբանությամբ էլ նախատեսվել է արդեն իսկ պաշտոնավարող փոխվարչապետին, նախարարին, դիվանագիտական ներկայացուցչին անվստահություն հայտնելու հնարավորությունը Ազգային ժողովի որոշմամբ՝ իրավասու հանձնաժողովի կողմից հարցի հրապարակային քննությամբ տրամադրված եզրակացության հիման վրա: Այս կարգավորումը համահունչ է խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող եվրոպական շատ երկրների փորձին[43], որտեղ անվստահության քվեն կարող է ուղղվել ոչ միայն ամբողջ Կառավարության, այլև դրա առանձին անդամների դեմ՝ ապահովելով գործադիրի անդամների անհատական քաղաքական պատասխանատվությունը[44]: Գործընթացի հրապարակայնությունը և մշտական հանձնաժողովի պարտադիր եզրակացության պահանջը նպատակ ունեն բարձրացնելու խորհրդարանական վերահսկողության թափանցիկությունն ու հիմնավորվածությունը: Միաժամանակ, կայունության երաշխավորման և նշված գործիքի հնարավոր չարաշահումը կանխելու նպատակով սահմանվել են հաճախականության սահմանափակումներ. անվստահության նախագիծ կարող է ներկայացվել նույն անձի վերաբերյալ ոչ շուտ, քան վեց ամիսը մեկ, որը բնորոշ է նաև Հունաստանի և Ռումինիայի սահմանադրական մոդելներին[45]: Սահմանվել է նաև, որ նման որոշում կայացվելու դեպքում պաշտոնատար անձի լիազորությունները համարվելու են դադարած, ինչը ենթադրում է, որ պաշտոնատար անձը Սահմանադրության ուժով պաշտոնից ազատված է համարվելու, իսկ պաշտոնը՝ թափուր՝ առանց լրացուցիչ ակտ կայացնելու անհրաժեշտության:

4.9. Մյուս ուղղությունը քննիչ հանձնաժողովների դերի և արդյունավետության բարձրացումն է: Ազգային ժողովի կողմից հանձնաժողովի անդամների թվի հաստատման և դրա հետևանքով քննիչ հանձնաժողովի գործունեության արգելափակման ռիսկերը չեզոքացնելու նպատակով նոր Սահմանադրության նախագծով առաջարկվում է ներդնել գործուն «հակափակուղի» (anti-deadlock) մեխանիզմ, որը կսահմանվի Ազգային ժողովի կանոնակարգով: Կարող է դիտարկվել, օրինակ, հետևյալ մեխանիզմը. Ազգային ժողովի կողմից հանձնաժողովի անդամների թիվը կամ կազմը ժամանակին չհաստատվելու դեպքում

---

43 Կառավարության առանձին անդամին պառլամենտի կողմից անվստահություն հայտնելու հնարավորություն ընձեռնված է, օրինակ՝ Իտալիայի, Շվեդիայի, Լիտվայի, Էստոնիայի սահմանադրություններով:

44 Venice Commission. Report on the Individual Responsibility of Ministers, CDL-AD(2024)016-e. §62-63.

45 Venice Commission. Report on the Relationship between the Parliamentary Majority and the Opposition, CDL-AD(2019)015. §67.

պահանջը ներկայացրած պատգամավորներից մեկը լիազորվում է հաստատել այն, ինչը երաշխավորում է հանձնաժողովի գործունեության մեկնարկը: Սա համահունչ է Վենետիկի հանձնաժողովի այն դիրքորոշմանը, որի համաձայն՝ «հակափակուղի» մեխանիզմները ունեն կենսական նշանակություն, եթե ինստիտուտները չեն գործում և չեն ծառայում իրենց սահմանադրական նպատակին՝ վարկաբեկելով ժողովրդավարությունը: Միևնույն ժամանակ, Վենետիկի հանձնաժողովը իր եզրակացություններից մեկում նշել է, որ եթե քննիչ հանձնաժողովի որոշումները կայացվելու են ձայների մեծամասնությամբ, ապա կարևոր է ընթացակարգային որոշ իրավունքներ վերապահել քննիչ հանձնաժողովի կազմում ընդդիմության ներկայացուցիչներին:

4.10. Քննիչ հանձնաժողովների վերաբերյալ մյուս կարևոր կարգավորումն այն է, որ հանձնաժողովում կարող է քննության առարկա դառնալ ցանկացած երևույթ, որն ունի հանրային նշանակություն՝ չսահմանափակվելով բացառապես Ազգային ժողովի իրավասության նեղ շրջանակով: Միջազգային փորձի ուսումնասիրությունը (Ֆրանսիա, Իսպանիա, Լեհաստան) փաստում է, որ քննիչ հանձնաժողովների ձևավորման առանցքային նախապայմանը հանրային հետաքրքրությունն է (res publica), այլ ոչ թե օրենսդիր մարմնի կոնկրետ լիազորությունների շրջանակը: Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ քննիչ հանձնաժողովների գործունեությունն ուղղված է քաղաքական գնահատականի տրամադրմանը և թափանցիկության ապահովմանը, ինչը չի բացառում անգամ քրեական վարույթի առարկա հանդիսացող փաստերի քննությունը՝ պայմանով, որ պահպանվեն իշխանությունների տարանջատման սկզբունքն ու ենթադատական կարգով (sub judice rule) քննություն վարելու կանոնը[46]:

4.11. Քննիչ հանձնաժողովների գործունեության արդյունավետության բարձրացումն անմիջականորեն պայմանավորված է դրանց եզրակացությունների իրացման և հաշվետվողականության գործուն մեխանիզմների ներդրմամբ: Քննիչ հանձնաժողովի զեկույցի ընդունման պարտադիր ընթացակարգի և դրանից բխող միջոցառումների վերաբերյալ հաշվետվողականության սահմանումը նպատակ ունի երաշխավորելու, որ խորհրդարանական քննության արդյունքները չկրեն ձևական բնույթ, այլ դառնան հանրային քննարկման առարկա և առաջացնեն գործնական հետևանքներ[47]: Միջազգային փորձը (Ֆրանսիա, Ֆինլանդիա, Պորտուգալիա) փաստում է այնպիսի ընթացակարգերի կարևորությունը, երբ Կառավարությունը

46 Տե՛ս, նույն տեղում, §136.

47 European Parliament. The European Parliament's Right of Inquiry in Context, pp. 36–37, pp. 36-37.

պարտավորվում է զեկուցել ձեռնարկված քայլերի մասին, որն ապահովում է հանձնաժողովների աշխատանքի իրական քաղաքական և իրավական ազդեցությունը[48]: Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ քննիչ հանձնաժողովի ստեղծումն իմաստազրկվում է, եթե քննության արդյունքները չեն ներկայացվում խորհրդարան և բանավեճի առարկա չեն դառնում լիագումար նիստում[49]: Այսպիսով, նոր Սահմանադրության նախագծով ներդրվում է հետադարձ արձագանքի կառուցակարգ, որը պարտավորեցնում է պետական մարմիններին արձագանքել հանձնաժողովի բացահայտումներին՝ բարձրացնելով խորհրդարանական վերահսկողության հանրային վստահությունն ու կիրառական նշանակությունը[50]:

4.12. Խորհրդարանական ընդդիմության համար սահմանվել է կարևորագույն իրավունք՝ երաշխավորված մասնակցություն ունենալ մի շարք պետական մարմինների ձևավորմանը: Մասնավորապես, կոլեգիալ անկախ և ինքնավար մարմինների անդամների ընտրության հարցում ընդդիմությունը կունենա մեկ անդամի քվոտա, այսինքն՝ այդ մարմինների անդամներից մեկն ընտրվելու է ընդդիմության առաջադրմամբ:

4.13. Քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու համար անհրաժեշտ ստորագրությունների շեմն իջեցվել է՝ 50,000-ից դարձնելով 40,000: Սա հիմնավորվում է անմիջական ժողովրդաիշխանության գործիքների հասանելիության ապահովման անհրաժեշտությամբ: Միջազգային փորձի համադրումը ցույց է տալիս, որ շատ ավելի մեծ բնակչություն ունեցող երկրներում սահմանված են առավել ներառական համամասնություններ՝ քաղաքացիական մասնակցության արհեստական խոչընդոտները վերացնելու և օրենսդրական գործընթացն առավել ժողովրդավարական դարձնելու տեսանկյունից:

4.14. Օրենսդիր իշխանությանը վերաբերող գլխում տեղ են գտել նաև մի շարք այլ կարևոր նորամուծություններ: Այսպես՝

1) Պետական մարմինների, մասնավորապես՝ Ազգային ժողովի գործառույթների և լիազորությունների հստակեցումը հիմնավորվում է այն իրավական տրամաբանությամբ, որ պետական մարմնի էությունը դրսևորվում է նրա գործունեության հիմնական ուղղություններով (գործառույթներով), որոնք պետք է

---

48 Ղազարյան Ա., Ասատրյան Դ., Քննիչ հանձնաժողովների արդյունավետությունը խորհրդարանական վերահսկողության լույսի ներքո, էջ 23:

49 Venice Commission. Report on the Relationship between the Parliamentary Majority and the Opposition, CDL-AD(2014)013. §134.

50 Տե՛ս նույն տեղում, §137:

ամրագրվեն սահմանադրական մակարդակում, մինչդեռ այդ գործառույթների կենսագործմանն ուղղված կոնկրետ լիազորությունների սպառիչ թվարկումը Սահմանադրությամբ գործնականում անհնար է և ոչ նպատակահարմար: Ուստի, որդեգրվել է այն մոտեցումը, ըստ որի՝ Սահմանադրությունը պետք է սահմանի Ազգային ժողովի հիմնական գործառույթներն ու առանցքային լիազորությունները, իսկ օրենսդրական դաշտին վերապահվի լիազորությունների այնպիսի շրջանակի մանրամասնում, որը թույլ կտա ճկուն արձագանքել հանրային կյանքի փոփոխվող պահանջներին և ապահովել պետական կառավարման արդյունավետությունը՝ դուրս չգալով սահմանադրորեն նախանշված գործունեության ուղղությունների շրջանակից:

2) Վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ քաղաքական ճգնաժամերի արդյունավետ լուծումը հաճախ պահանջում է խորհրդարանի արձակում և արտահերթ ընտրությունների անցկացում, ինչի բացակայությունը հանգեցնում է արհեստական մեխանիզմների կիրառման: Նոր Սահմանադրությամբ Ազգային ժողովի ինքնարձակման սահմանադրական հնարավորության նախատեսումը կապահովի, որ նման որոշումները կայացնի հենց խորհրդարանը՝ բացառելով գործադիր իշխանության կողմից լուծարման սպառնալիքի օգտագործումը և ամրապնդելով խորհրդարանի ինստիտուցիոնալ դերը[51]: Բացի այդ, նոր Սահմանադրությամբ առաջարկվել է Ազգային ժողովի ինքնարձակման նախագիծ ներկայացնելու գործիքակազմը սահմանափակել այն չընդունվելուց հետո կարճ ժամանակահատվածում (6 ամիս) կրկին ներկայացնելու և ռազմական կամ արտակարգ դրության ընթացքում ներկայացնելու արգելքի նախատեսմամբ: Շատ սահմանադրություններ արգելում են խորհրդարանի լուծարումը պատերազմի կամ արտակարգ դրության ժամանակ՝ այն պատճառով, որ նման պայմաններում դժվար է ապահովել ազատ և արդար ընտրություններ, անհրաժեշտ է պահպանել պետական իշխանության կայունությունն ու շարունակականությունը, ինչպես նաև ապահովել խորհրդարանի շարունակական գործունեությունը՝ գործադիր իշխանությանը տրված ընդլայնված լիազորությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

3) Պատգամավորի՝ իր կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոն զբաղեցնելու արգելքի համատեքստում ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում Կառավարության անդամ նշանակվելու դեպքում Ազգային ժողովի պատգամավորի մանդատի պահպանման հնարավորություն: Վենետիկի հանձնաժողովի

[51] International IDEA. Dissolution of Parliament Primer. Հասանելի է՝ https://www.idea.int/sites/default/files/publications/dissolution-of-parliament-primer.pdf էջ 21-22

դիրքորոշման համաձայն՝ նման անհամատեղելիության կանոնը շեշտում է իշխանության ճյուղերի տարանջատումը, սակայն պառլամենտարիզմի սկզբունքն արդարացնում է դրա ժամանակավոր բնույթը և մանդատի վերականգնման իրավունքը[52]: Միաժամանակ, այս կարգավորումն ուղղված է Ազգային ժողովի կայունության և ներկայացուցչականության ապահովմանը: Սակայն իշխանությունների տարանջատման և փոխզսպման սկզբունքի արդիականացված ընկալումը, որը թույլ է տալիս հավասարակշռել գործադիր և օրենսդիր ճյուղերի սերտ փոխգործակցությունը, պետք է հնարավորություն ընձեռի Կառավարության անդամ նշանակված պատգամավորին պահպանելու իր պատգամավորական մանդատը՝ որպես Կառավարության անդամ պաշտոնավարման ժամանակահատվածի չափով կասեցնելով պատգամավորական լիազորությունները, որը և նախատեսվել է նոր Սահմանադրության նախագծով: Հատկանշական է, որ խորհրդարանական ռեժիմ ունեցող երկրների մեծ մասում նախարարական և խորհրդարանական պարտականությունների համատեղումը ոչ միայն թույլատրված է, այլև ակտիվորեն խրախուսվում է օրենսդիր և գործադիր մարմինների միջև կապերն ամրապնդելու համար[53]: Այդ նպատակով Ազգային ժողովի կանոնակարգով և Ընտրական օրենսգրքով պետք է ներդրվեն նաև համապատասխան կառուցակարգեր՝ այս հիմքով պատգամավորի լիազորությունները կասեցվելու դեպքում նոր մանդատ տրամադրելու, ինչպես նաև պատգամավորի՝ խորհրդարան վերադառնալու դեպքում լիազորությունների վերսկսման համար: Նույն տրամաբանությամբ նաև սահմանվել է, որ Կառավարության անդամը կամ պաշտոնակատարը ևս կարող է ընտրվել պատգամավոր, և ստանալով մանդատը, միաժամանակ կասեցնել պատգամավորի լիազորությունները Կառավարության անդամ նշանակվելու նպատակով՝ պահպանելով խորհրդարան վերադառնալու իր իրավունքը: Այսպիսով, առաջարկվող կառուցակարգը կնպաստի պետական կառավարման համակարգի ճկունությանը՝ զերծ պահելով խորհրդարանը կադրային կորուստներից և ապահովելով գործադիր

---

52 Venice Commission, CDL(2006)057-e, Draft Opinion on the entitlement for former MPs to resume their parliamentary seat upon ceasing their governmental functions, §31.

53 Բելգիայի, Շվեդիայի, Սլովակիայի, Էստոնիայի և Նորվեգիայի մոդելներում նախարար նշանակված պատգամավորի խորհրդարանական մանդատը հիմնականում ժամանակավորապես կասեցվում է կամ իրականացվում է փոխարինողի միջոցով, իսկ կառավարության անդամի լիազորությունների ավարտից հետո նա կարող է վերականգնել իր սկզբնական մանդատը: Ֆրանսիայում ևս գործում է անհամատեղելիության սկզբունքը, սակայն պատգամավորի տեղը ժամանակավորապես զբաղեցնում է փոխարինողը մինչև նախարարական լիազորությունների ավարտից հետո սահմանված ժամկետը լրանալը:

իշխանության քաղաքական պատասխանատվությունը ներկայացուցչական մարմնի առջև[54]:

4) Նոր Սահմանադրությամբ Ազգային ժողովի էթիկայի հարցերով հանձնաժողովը դառնում է մշտական հանձնաժողով՝ այդ հանձնաժողովի դերն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Բացի այդ, հանձնաժողովի կազմավորման հիմքում դրվել է իշխող և ընդդիմադիր խմբակցություններից հավասար թվով պատգամավորների ներգրավման սկզբունքը, որը միտված է ապահովելու պատգամավորական էթիկային առնչվող դեպքերի անկողմնակալ քննությունը և բարձրացնելու հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը: Այս մոդելը ստեղծում է փոխադարձ զսպումների միջավայր, որտեղ պատգամավորական վարքագծի գնահատականը խարսխվում է ոչ թե քաղաքական նպատակահարմարության, այլ մասնագիտական անկողմնակալության վրա:

5) «Ռազմական դրության մասին» և «Արտակարգ դրության մասին» օրենքները նախատեսվել են սահմանադրական օրենքների շարքում, որը պայմանավորված է դրանց բացառիկ նշանակությամբ պետականության կայունության և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության հարցում: Ի տարբերություն օրենքների՝ սահմանադրական օրենքներն օժտված են ավելի բարձր իրավաբանական ուժով և ընդունվում են պատգամավորների ձայների ավելի բարձր շեմով, որը երաշխավորում է լայն քաղաքական համակարծություն և կանխում գործադիր իշխանության կողմից իրավիճակային կամ կամայական փոփոխությունները: Սա հատկապես կարևոր է մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման տեսանկյունից, քանի որ հատուկ իրավական ռեժիմների ժամանակ թույլատրվող միջամտությունները պետք է լինեն առավելագույնս հստակ, կանխատեսելի և պաշտպանված քաղաքական շահարկումներից: Մի շարք երկրներում (Իսպանիա, Պորտուգալիա, Չեխիա, Սլովակիա) ևս առկա են ռազմական կամ արտակարգ դրության իրավական ռեժիմների վերաբերյալ սահմանադրական օրենքներ (օրգանական օրենքներ)[55]: Դա ընդգծում է այս մոտեցման արդյունավետությունը ճգնաժամային իրավիճակներում ժողովրդավարական հաստատությունների կայունությունն ու փոխադարձ վերահսկողությունն ապահովելու տեսանկյունից:

---

54 Venice Commission. Report on the Role of the Opposition in a Democratic Parliament, CDL-AD(2012)027-e. §78-79.

55 Venice Commission. Emergency Powers Observatory. Հասանելի է՝ https://www.venice.coe.int/files/EmergencyPowersObservatory/T04-E.htm

6) Արտակարգ դրության հայտարարման հիմքերն ընդլայնվել են՝ ներառելով բնական կամ հասարակական աղետի անմիջական վտանգը, որը նպատակ ունի հաղթահարելու գործող կարգավորումների թերի բնույթը և ապահովելու պետության արդյունավետ արձագանքը ճգնաժամային իրավիճակներին: Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշմամբ՝ արտակարգ դրությունը պետք է հնարավոր լինի հայտարարել ոչ միայն սահմանադրական կարգին սպառնացող վտանգի, այլև բնական աղետների, համաճարակների կամ տնտեսական ճգնաժամերի դեպքում, որոնք հիմնարար սպառնալիք են պետության և բնակչության համար[56]: Միջազգային փորձը (Լեհաստան, Ալբանիա, Կոլումբիա) ցույց է տալիս, որ բնական և հասարակական աղետները դիտարկվում են որպես հատուկ իրավական ռեժիմի ինքնուրույն հիմքեր, քանի որ դրանք հանգեցնում են հանրության կենսագործունեության խաթարման և մարդու հիմնարար իրավունքների զանգվածային խախտման վտանգի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշմամբ՝ «ազգի կյանքին սպառնացող հանրային արտակարգ դրությունը» ենթադրում է բացառիկ ճգնաժամային իրավիճակ, որը սպառնում է ողջ բնակչությանը[57]: Հետևաբար, առաջարկվող լրացումը երաշխավորում է իրավական որոշակիություն և թույլ է տալիս Կառավարությանը օպերատիվորեն կիրառել անհրաժեշտ միջոցառումներ՝ ուղերձով դիմելով ժողովրդին և ապահովելով պետական իշխանության հաշվետվողականությունը ծայրահեղ իրավիճակներում:

4.15. Ընդհանուր առմամբ, նոր Սահմանադրության նախագիծը օրենսդիր իշխանության գլուխը զարգացնում է որպես առավել ինքնավար, քաղաքական ճգնաժամերին ինքնուրույն արձագանքելու ունակ, վերահսկողական գործառույթներով հագեցած և ընդդիմության իրավունքները ավելի հստակ երաշխավորող խորհրդարանական մոդել:

56 Venice Commission. Compilation of Venice Commission Opinions and Reports on States of Emergency, CDL-PI(2020)003. §244.

57 European Court of Human Rights. Lawless v. Ireland (No. 3), Judgment, §28.

5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

5.1. Նոր Սահմանադրության նախագծում Հանրապետության նախագահին վերաբերող կարգավորումները միտված են նախագահի ինստիտուտի գործառույթների հստակեցմանը և որոշ դեպքերում՝ դրա գործնական արդյունավետության բարձրացմանը:

5.2. Առաջին կարևոր կարգավորումն այն է, որով ամրագրվել է Հանրապետության նախագահի՝ իրավունքի գերակայության և օրինականության ամրապնդմանը նպաստելու, ինչպես նաև հանրային իշխանության մարմինների գործունեության շարունակականությունն ապահովելու գործառույթը՝ որպես սահմանադրական մարմինների միջև փոխզսպումների ու հակակշիռների առավել արդյունավետ հարաբերակցություն սահմանելու միջոց: Սա միտված է նախագահի՝ որպես պետության գլխի ազդեցության ու կշռի էական բարձրացմանը՝ չխաթարելով խորհրդարանական կառավարման ձևի տրամաբանությունը: Նախագահի ներգրավումը հանրային կառավարման գործընթացին այս ձևաչափով նպատակ ունի խթանել իշխանության թևերի միջև փոխհամաձայնության և կառուցողական գործակցության վրա խարսխված քաղաքական մշակույթը, ինչը կնպաստի քաղաքական կայունությանը և հանրային համերաշխությանը: Ըստ այդմ՝ լիազորությունների նման ընդլայնումը չի ենթադրում ներխուժում գործադիր իշխանության տիրույթ, այլ ամրապնդում է նախագահի՝ որպես Սահմանադրության պահպանմանը հետևող միջնորդող, հավասարակշռող և զսպող ինստիտուտի գործիքակազմը:

5.3. Մյուս նորամուծությունը Հանրապետության նախագահի թեկնածուներին ներկայացվող տարիքային, քաղաքացիության և նստակեցության ցենզերի վերանայումն է, որը պայմանավորված է սահմանադրական կարգավորումները միջազգային զարգացող ստանդարտներին և ժողովրդավարական լավագույն փորձին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես, նվազագույն տարիքային շեմը 35 տարեկան դարձնելը նպատակ ունի վերադառնալ խորհրդարանական կառավարման ձև ունեցող բազմաթիվ երկրներում ընդունված միջազգային չափանիշին, իսկ քաղաքացիության և նստակեցության ժամկետների կրճատումը մինչև 5 տարի միտված է վերանայելու ընտրվելու իրավունքի անհիմն սահմանափակումները: Այս առաջարկները հիմնվում են Վենետիկի

հանձնաժողովի[58], ԵԱՀԿ/ՄԻՊԳ-ի[59] և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի[60] դիրքորոշումների վրա, որոնք ընդգծել են, որ չափազանցված նստակեցության պահանջները կարող են դիտարկվել որպես անհիմն կամ խտրական սահմանափակումներ:

5.4. Նոր Սահմանադրությամբ առաջարկվում է Հանրապետության նախագահին վերապահել դատավորների լիազորությունները դադարեցնելու լիազորություն: Միաժամանակ, Հանրապետության նախագահին Բարձրագույն դատական խորհրդի նիստեր հրավիրելու լիազորության վերապահումը բխում է նրա՝ որպես պետության գլխի սահմանադրական առաքելությունից՝ ապահովելու պետական ինստիտուտների անխափան գործունեությունն ու հանրային իշխանության մարմինների շարունակականությունը: Այս գործառույթը, որը կիրառվում է նաև խորհրդարանական կառավարման ձև ունեցող այլ երկրներում (օրինակ՝ Իտալիա, Ռումինիա), միտված է դատական իշխանության անկախության երաշխավորմանը և իրավական պետության հիմնասյուներից հանդիսացող դատական համակարգի «կշռի» բարձրացմանը: Նոր կարգավորմամբ նախագահը, առանց քվեարկության իրավունքի կամ պարտադիր ցուցումների, հնարավորություն է ստանում հետևելու Բարձրագույն դատական խորհրդի կողմից իր գործառույթների իրականացմանը, որը իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախությանը սպառնացող վտանգները և այլ թևերի հնարավոր «ուղղորդումները» կանխող կարևոր գործիք է[61]: Սա թույլ կտա նախագահին ավելի իմաստալից իրացնել Սահմանադրության պահպանմանը հետևելու իր դերակատարությունը՝ միաժամանակ նպաստելով դատական իշխանության հետագա զարգացմանն ու գործադիր իշխանությունից դրա իսպառ տարանջատմանը:

---

58 Venice Commission. Code of Good Practice in Electoral Matters, CDL-AD(2002)023rev.

59 OSCE/ODIHR. Opinion on the Law on Election of Councillors and Members of Parliament and the Law on Election of the President, 2 June 2025. Հասանելի է՝ https://legislationline.org

60 UN Human Rights Committee. General Comment No. 25, Article 25 (ICCPR), para. 15

61 Venice Commission. Opinion CDL-AD(2023)015-e. §§7-8

6. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1. Նոր Սահմանադրության նախագծում սահմանադրական մակարդակով ամրագրվում է գործադիր իշխանության համակարգի մարմինների գաղափարը: Նոր մոտեցմամբ գործադիր իշխանությունը ներկայացվում է որպես բազմամակարդակ կառուցվածք՝ բաղկացած Կառավարությունից՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին, և գործադիր իշխանության համակարգի այլ մարմիններից, որոնք են նախարարությունները, Կառավարությանը ենթակա մարմինները, վարչապետին ենթակա մարմինները, նախարարություններին ենթակա մարմինները և տարածքային կառավարման մարմինները, որոնց շրջանակը արդեն սահմանվելու է օրենքով:

6.2. Նոր Սահմանադրության նախագծում բացառվել է Կառավարության կողմից պետության ներքին և արտաքին քաղաքականության «մշակման» բացառիկ գործառույթը: Սա պայմանավորված է իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքի լիարժեք կենսագործման անհրաժեշտությամբ: Քաղաքականության իրականացումը հստակ տարանջատվել է քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումից, ինչը պետք է դիտարկվի այլ պետական մարմինների, մասնավորապես՝ Ազգային ժողովի հետ համագործակցության տիրույթում: Այս մոտեցումը նպատակ ունի ապահովել, որ պետության քաղաքական կուրսի որոշումը չհանդիսանա միայն իշխանության մեկ ճյուղի մենաշնորհը:

6.3. Մյուս ուղղությունը վերաբերում է գործադիր իշխանության կողմից ընդունվող կարևոր քաղաքական որոշումների սահմանադրական վերահսկելիությանը: Նշվածը հատկապես վերաբերում է զինված ուժերի վերաբերյալ կարգավորումներին, որոնք ամրագրում են զինվորականության ենթակայությունը Կառավարությանը և հաշվետվողականությունն Ազգային ժողովին: Նոր Սահմանադրության նախագծով հստակեցվում է զինված ուժերի ղեկավարման շղթան, որտեղ զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը՝ գլխավոր շտաբի պետը, բոլոր իրավական ռեժիմների պայմաններում ենթակա է Պաշտպանության նախարարին, իսկ վերջինս իրականացնում է զինված ուժերի ընդհանուր ղեկավարումը՝ որպես Կառավարության անդամ: Այս կառուցակարգը միտված է կանխելու զինվորական համակարգի անջատումը պետության ընդհանուր

քաղաքականությունից և ապահովելու իշխանությունների տարանջատման սկզբունքի արդյունավետ կիրառումը անվտանգության ոլորտում[62]:

6.4. Զինված ուժերի մասով երկրորդ առանցքային կարգավորումը վերաբերում է զինված ուժերի կիրառման ռեժիմների և դրանց նկատմամբ խորհրդարանական վերահսկողության համակարգին: Նախագծով առաջարկվում է հավասարակշռված մոդել, համաձայն որի՝ զինված ուժերը ՀՀ տարածքից դուրս ուղարկելու համար պահանջվում է Ազգային ժողովի նախնական (ex ante) համաձայնությունը, ինչը համապատասխանում է միջազգային առաջադեմ փորձին (օրինակ՝ Գերմանիա, Իտալիա, Լիտվա):

6.5. Զինված ուժերի վերաբերյալ երրորդ կարևոր նորամուծությունը ճգնաժամային իրավիճակներում անհետաձգելի որոշումների կայացման և դրանց զսպման մեխանիզմների սահմանադրականացումն է: Նախատեսվում է, որ անհետաձգելի անհրաժեշտության դեպքում, բացի ՀՀ տարածքից դուրս ուղարկելու դեպքերի, զինված ուժերի կիրառման որոշումը կարող է կայացնել վարչապետը՝ որպես գերագույն հրամանատար, որից հետո պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կառավարությանը, իսկ Կառավարությունն իր հերթին կարող է վերացնել վարչապետի որոշումը կամ հայտարարել ռազմական կամ արտակարգ դրություն, որի հիման վրա էլ անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ, իսկ Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ռազմական կամ արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել ռազմական կամ արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը: Հետևաբար զինված ուժերի կիրառման հարցում նոր Սահմանադրության նախագծով ներդրվել է բազմաշերտ վերահսկողական շղթա: Ընդ որում, զինված ուժերի ներգրավումը արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումներում (օրինակ՝ համաճարակների կամ բնական աղետների ժամանակ) հիմնվում է միջազգային պրակտիկայում ընդունված այն մոտեցման վրա, որ զինված ուժերը կարող են աջակցել քաղաքացիական իշխանություններին ներքին անվտանգության և բնակչության պաշտպանության հարցերում:

6.6. Գործադիր իշխանությանը վերաբերող մյուս կարևոր ուղղությունը Կառավարության կազմավորմանը և գործունեությանը վերաբերող

---

62 Dieterich, Sandra, Hartwig Hummel, and Stefan Marschall. Strengthening Parliamentary War Powers in Europe. DCAF Policy Paper No. 27, 2008, page 5, հասանելի է՝ https://www.sozwiss.hhu.de/fileadmin/redaktion/Fakultaeten/Philosophische_Fakultaet/Sozialwissenschaften/Politikwissenschaft_III/Dateien/Hummel/Hummel_PAKS_2008.pdf.

նորամուծություններն են: Սահմանվել է, որ նորընտիր խորհրդարանի դեպքում վարչապետը պետք է ընտրվի խորհրդարանական մեծամասնություն ձևավորած խմբակցության պատգամավորների կազմից, ներառյալ՝ այն պատգամավորների, որոնք պատգամավոր են ընտրվել Կառավարության անդամի կամ պաշտոնակատարի կարգավիճակում, ստացել են մանդատը և կասեցրել պատգամավորի լիազորությունները: Նույն տրամաբանությամբ սահմանվել է, որ վարչապետի հրաժարականի կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում վարչապետի թեկնածու կարող է առաջադրվել պատգամավորը, ներառյալ՝ Կառավարության անդամ նշանակված և լիազորությունները կասեցված պատգամավորը: Վարչապետի նշանակման նոր ընթացակարգը նպատակ ունի բարձրացնելու գործադիր իշխանության գլխի ընտրության կանխատեսելիությունը և ամրապնդելու պետական կառավարման համակարգի ներքին միասնականությունը: Դրանով Սահմանադրությունը երաշխավորում է թեկնածուի և նրան ընտրած քաղաքական ուժի միջև քաղաքական սերտ կապը, որը կառավարման լեգիտիմության անկյունաքարն է: Սա կանխում է հանրային բավարար վստահություն չունեցող այն անձանց նշանակումը, որոնք կարող են վարել պատգամավորների քաղաքական կամքին հակասող քաղաքականություն:

6.7. Նոր Սահմանադրության նախագծում ամրագրվել է նաև, որ Կառավարությունը համարվելու է կազմավորված Կառավարության անդամների առնվազն երկու երրորդի նշանակման դեպքում: Սա նպատակ ունի երաշխավորելու գործադիր իշխանության գործառնական անընդհատությունը և կանխելու կառավարման հնարավոր վակուումը: Այս դրույթը հնարավորություն է տալիս Կառավարությանը ձեռնամուխ լինել իր լիազորությունների իրականացմանը նույնիսկ այն դեպքում, երբ որոշ նախարարական պորտֆելներ դեռևս թափուր են, որը նպաստում է պետական ապարատի ճկունությանը: Նման կարգավորումը կանխում է կառավարության ձևավորման գործընթացի անհարկի ձգձգումները և երաշխավորում է, որ գործադիր իշխանությունն անցնի իր լիազորությունների իրականացմանը՝ ունենալով անհրաժեշտ քաղաքական և իրավական հենք: Միևնույն ժամանակ, նոր Սահմանադրության նախագծով առաջարկվում է փոխվարչապետների և նախարարների առավելագույն թվի սահմանումից հրաժարվել՝ գործադիր իշխանության անհրաժեշտ ճկունությունը և ինքնավարությունը սեփական ծրագրերն իրագործելու հարցում ապահովելու նպատակով: Թեև Կառավարության կազմի սահմանափակումը կարևորվում է ժողովրդավարական զսպումների համատեքստում, սակայն դրա սահմանադրականացումը միջազգային իմպերատիվ ստանդարտ չէ, և

չափազանց կոշտ կարգավորումները կարող են վնասել իշխանությունների տարանջատման սկզբունքին[63]:

6.8. Կարևոր ամրագրում է արվել նաև Կառավարության նիստերի հրապարակային լինելու առումով, որը բխում է ժողովրդավարական և իրավական պետության հիմնարար արժեքներից՝ հանրային իշխանության թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքները հաշվի առնելով: Թեև միջազգային պրակտիկայում հանդիպում են տարբեր մոդելներ, այդ թվում՝ դռնփակության կանխավարկածով (օրինակ՝ Էստոնիայում), նոր կարգավորումը համապատասխանում է ժամանակակից հայեցակարգերին, ինչպիսին է ԱՄՆ-ում գործող «Government in the Sunshine Act»-ը: Այս մոտեցման համաձայն՝ պետական մարմինների գործունեության թափանցիկությունը լավագույն միջոցն է կոռուպցիայի կանխարգելման և հանրային վստահության ամրապնդման համար, քանի որ լեգիտիմությունը հնարավոր չէ ապահովել առանց որոշումների կայացման ընթացքի նկատմամբ հանրային վերահսկողության: Հետևաբար, նիստերի հրապարակայնությունը Սահմանադրությամբ երաշխավորելը նպատակ ունի տեղեկատվություն ստանալու իրավունքի լույսի ներքո ապահովելու առավել բաց և հանրամատչելի կառավարում՝ դռնփակ նիստերի հնարավորությունը թողնելով բացառապես օրենքով նախատեսված հատուկ դեպքերի համար:

6.9. Նոր Սահմանադրության նախագծով Անվտանգության խորհրդի և Հանրային խորհրդի վերաբերյալ սահմանադրական կարգավորումներ չեն նախատեսվել՝ պետական կառավարման համակարգի ճկունության ապահովման և սահմանադրական տեքստի ավելորդ ծանրաբեռնվածությունից խուսափելու անհրաժեշտությամբ: Նման մարմինների ձևավորումն ըստ անհրաժեշտության կարող է ավելի արդյունավետորեն իրականացվել օրենսդրական մակարդակում՝ հաշվի առնելով ներքին և արտաքին մարտահրավերների փոփոխվող դինամիկան: Սա հնարավորություն կտա գործադիր և օրենսդիր իշխանություններին ձևավորելու ավելի օպերատիվ և փոփոխվող իրավիճակին հարմարվող խորհրդակցական մեխանիզմներ՝ խուսափելով կոշտ սահմանադրական կարգավորումներից, որոնք հաճախ դժվարացնում են կառավարման համակարգի արդիականացումը:

---

63 Venice Commission. Opinion CDL-AD(2023)036-e. հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2023)036-e :

7. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1. Նոր Սահմանադրության նախագծում դատական իշխանությանը վերաբերող էական նորամուծություններից մեկը երդվյալների մասնակցությամբ դատավարության իրականացման դրույթի նախատեսումն է: Սա հիմնավորվում է ժողովրդաիշխանության սկզբունքի ամրապնդմամբ և դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության ու լեգիտիմության բարձրացմամբ՝ արդարադատության իրականացմանը քաղաքացիներին ներգրավելու միջոցով և ապահովում է հասարակական վերահսկողություն դատարանների նկատմամբ: Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ երդվյալների ինստիտուտը, անկախ կիրառվող մոդելից՝ լինի դա մեղավորության հարցի առանձին որոշում, թե պրոֆեսիոնալ դատավորների հետ համատեղ գործի քննություն[64], էապես բարելավում է դատավարության որակը, նպաստում է իրավագիտակցության բարձրացմանն ու կանխում մարդկանց օտարումը օրենքից և արդարադատությունից: Հաշվի առնելով, որ տարբեր իրավական համակարգերում երդվյալները հիմնականում ներգրավվում են ծանր հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի քննությանը[65], սահմանադրական այս նորմը հիմք կծառայի օրենսդրությամբ սահմանելու երդվյալների մասնակցության կոնկրետ դեպքերն ու կարգը՝ հիմնվելով նրանց ներքին համոզմունքի և սոցիալական փորձառության վրա:

7.2. Ընդլայնվել է Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների շրջանակը: Այսպես՝

1) Բարձրագույն դատական խորհրդին տրվել են դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության ամրապնդման և դատարանների անկախության պաշտպանության լիազորություններ: Սա հիմնավորվում է այն հանգամանքով, որ դատական իշխանության լեգիտիմության հիմքը քաղաքացիների վստահությունն է իրավական պետության նկատմամբ: Ուստի Բարձրագույն դատական խորհրդի խնդիրն է սահմանադրական մակարդակով երաշխավորել, որ դատավորները գործեն բացառապես օրենքի հիման վրա՝ խթանելով

---

64 Hans, Valerie P. Jury Systems Around the World, pp. 278–280, հասանելի է հետևյալ հղումով՝ https://scholarship.law.cornell.edu/facpub/305/

65 Takeuchi, Hisashi, and Dimitri Vanoverbeke. A Comparative Perspective on Trial by Jury, 2019, page 5, հասանելի է հետևյալ հղումով՝ https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=3744726:

արդարադատության որակն ու արդյունավետությունը[66]: Միաժամանակ, հաշվի առնելով միջազգային չափանիշները[67], անհրաժեշտ է զսպող մեխանիզմներ նախատեսել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար, որպեսզի վերջիններս ձեռնպահ մնան սուբյեկտիվ գնահատականներից կամ քաղաքական հայտարարություններից, որոնք կարող են խաթարել դատական անկախությունը: Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատական համակարգի հեղինակության պաշտպանի սահմանադրական դերակատարումը թույլ կտա անհրաժեշտության դեպքում պատշաճ արձագանքել անտեղի քննադատություններին և ապահովել զսպումների ու հավասարակշռման սկզբունքի պահպանումը՝ բացառելով դատական իշխանության վրա ցանկացած ոչ իրավաչափ ազդեցություն:

2) Ամրագրվել է Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունը՝ ապահովելու դատական ինքնակառավարման օժանդակ հանձնաժողովների աշխատանքը: Դա հիմնավորվում է դատավորների անկախության և գործունեության գնահատման ոլորտում մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումների դերի կարևորությամբ: Քանի որ Դատական օրենսգրքով նախատեսված՝ էթիկայի և կարգապահական, ուսումնական հարցերի ու դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովներն իրականացնում են առանձնահատուկ գործառույթներ, որոնք ուղղակիորեն վերաբերում են դատական իշխանության գործունեությանը, դրանց գոյությունը պահանջում է ամուր իրավական հիմք: Վենետիկի հանձնաժողովն իր հերթին շեշտել է, որ Բարձրագույն դատական խորհրդի պատշաճ գործառույթը կարող է պահանջել նման ենթամարմինների ստեղծում, և այդ հնարավորությունը պետք է առնվազն հիշատակված լինի սահմանադրական մակարդակում[68]՝ թույլ տալով մանրամասն լիազորությունները նկարագրել օրենսդրությամբ: Այսպիսով, նշված նորմի նախատեսումը կապահովի դատական համակարգի կառուցվածքային ստորաբաժանումների լեգիտիմությունը և կնպաստի դատական իշխանության անկախության երաշխավորման գործընթացի ինստիտուցիոնալ ամբողջականությանը:

---

66 Consultative Council of European Judges (CCJE), Opinion No. 10 (2007) on the Council for the Judiciary at the service of society, adopted on 23 November 2007, Council of Europe, Strasbourg, հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/168074779b, կետ 10:

67 CM Recommendation 2010/12, պարբերություն 18:

Council of Europe, Expert Report on the Independence of Judges: Working Group on Regional Dialogue on Judicial Reforms in the Eastern Partnership Countries, Strasbourg, 19 September 2016, հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/1680700f3a, կետ 18:

68 Venice Commission, CDL-AD(2016)009-e, §20

7.3. Մյուս խումբ էական նորամուծությունները վերաբերում են Սահմանադրական դատարանի լիազորություններին: Այսպես՝

1) Սահմանադրական դատարանը կկարողանա ստուգել վերպետական միջազգային կազմակերպությունների մարմինների նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը: Սա հիմնավորվում է Սահմանադրության գերակայության ապահովման և իրավական պաշտպանության գործուն կառուցակարգեր ստեղծելու անհրաժեշտությամբ, քանի որ ներկայում բացակայում է նման ակտերի վերահսկողության որևէ ընթացակարգ: Սահմանադրական դատարանն իր թիվ ՍԴՈ-1175 որոշմամբ արձանագրել է, որ վերպետական մարմինների որոշումները Հայաստանում կարող են գործել միայն Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում, իսկ թիվ ՍԴՈ-1381 որոշմամբ հստակեցրել է, որ վերազգային իրավունքի աղբյուրները պետք է հանդիսանան «հետագա սահմանադրական վերահսկողության» առարկա: Այս մոտեցումը համահունչ է նաև ԵՏՄ անդամ այլ երկրների դիրքորոշումներին[69] և նպատակ ունի կանխելու Սահմանադրությանը հակասող միջազգային ակտերի կիրառումը ՀՀ տարածքում՝ այս հարցով Սահմանադրական դատարան դիմելու բացառիկ իրավասությունը վերապահելով Կառավարությանը՝ որպես այդ կազմակերպություններում ինստիտուցիոնալ դերակատարի:

2) Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունները դադարեցնելու որոշումները հնարավոր կլինի բողոքարկել Սահմանադրական դատարան: Համաձայն ԵԴԽԽ-ի և Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումների՝ դատական խորհուրդների նմանատիպ որոշումները պետք է ենթակա լինեն դատական վերանայման[70], ընդ որում՝ որոշում կայացնող և բողոքը քննող մարմինները պետք է լինեն տարբեր[71]: Հաշվի առնելով Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1488 որոշումը, որով անընդունելի է համարվել Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկումը ստորադաս կամ հավասար ատյանի դատարաններ,

---

69 Filatova, M., Соотношение правопорядков и иерархия международных и национальных норм: новые вопросы и подходы к их решению в практике Конституционного Суда России, Международное правосудие, 2016, № 3, pp. 88–100

70 Consultative Council of European Judges (CCJE). (2007). Opinion No. 10: Council for the Judiciary at the service of society. Council of Europe, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/168074779b , կետ 39:

71 Venice Commission, Opinion on the Draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina, CDL-AD(2014)008-e, adopted at the 98th Plenary Session (Venice, 21–22 March 2014) 16 https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)008-e , էջ 16:

ինչպես նաև հիմնվելով Խորվաթիայի և Սերբիայի փորձի վրա, որտեղ Սահմանադրական դատարանը նման վեճերով բողոքարկման վերջնական ատյանն է, առաջարկվող լիազորությունը կերաշխավորի դատավորների անկախությունը և կապահովի զսպումների ու հավասարակշռման գործուն կառուցակարգ:

3) Հստակեցվել է Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրական վերահսկողության շրջանակը: Սա հիմնավորվում է այդ գործընթացի իրավական սահմանները հստակ ուրվագծելու անհրաժեշտությամբ՝ խուսափելու համար սահմանադրական փոփոխությունների գաղափարի ձևախեղումից[72]: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման վերահսկողությունը հաճախ սահմանափակվում է միայն ընթացակարգային կամ ձևական պահանջներով, իսկ, օրինակ, Ուկրաինայի դեպքում այն վերաբերում է մարդու իրավունքների կամ անկախության վերացման արգելքին: Առաջարկվում է սահմանադրական մակարդակով ամրագրել «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով արդեն իսկ նախատեսված մոտեցումը, ըստ որի՝ նախագծի սահմանադրականությունը գնահատվում է բացառապես Սահմանադրության անփոփոխելի հոդվածների տեսանկյունից:

4) Բարձրագույն դատական խորհրդին տրվել է լիազորություն՝ դատարանների և դատավորների անկախությունը խաթարող նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը ստուգելու հարցով դիմել Սահմանադրական դատարան: Սա հիմնավորվում է եվրոպական իրավունքում ձևավորված «ուժեղ դատական խորհուրդ» հայեցակարգի ներդրմամբ[73], որը ենթադրում է դատական համակարգի անկախության երաշխավորմանն ուղղված լրացուցիչ գործիքակազմի տրամադրում: ԵԴԽԽ-ն իր թիվ 24 (2021) կարծիքում շեշտում է, որ դատական խորհուրդը պետք է հնարավորություն ունենա կասկածի տակ դնելու դատական համակարգին վերաբերող ակտերը՝ դիմելով Սահմանադրական դատարան[74]: Այս գործիքը թույլ կտա Բարձրագույն դատական խորհրդին առավել պատշաճ իրացնել իր սահմանադրական առաքելությունը՝ կանխելով դատական իշխանության

---

72 Մանասյան Ա. Ա. Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական. Երևան, 2019, էջ 138:

73 European Commission for Democracy through Law (Venice Commission), Overview of Judicial Councils in Europe, DG I – DCJ (2022)1, March 2022 https://www.venice.coe.int/files/overview_JC_Europe_en.pdf, էջ 1:

74 Consultative Council of European Judges. Opinion No. 24 (2021), page 6, հասանելիէ հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/opinion-no-24-2021-of-the-ccje/1680a47604

սահմանադրական դիրքի կամ դատավորների իրավունքների ցանկացած ոտնահարում:

5) Նոր Սահմանադրությամբ Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները վիճարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում չեն ներառվել նախագահի թեկնածուները: Սա հիմնավորվում է խորհրդարանական կառավարման համակարգի առանձնահատկություններով, որտեղ խորհրդարանի կողմից պետության գլխի ընտրությունը դիտարկվում է որպես բացառապես քաղաքական ակտ («acte politique»): Ի տարբերություն համաժողովրդական ընտրությունների՝ անուղղակի ընտրության կարգը ենթադրում է ընտրողների փոքր և պրոֆեսիոնալ շրջանակ, որը նվազագույնի է հասցնում ընթացակարգային այնպիսի խախտումների հավանականությունը, որոնք կարող են հանգեցնել արդյունքների անվավերության: Միջազգային փորձը, մասնավորապես Ալբանիայի և Լիտվայի օրինակները ցույց են տալիս, որ նմանատիպ վեճերով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահվում է պատգամավորների որոշակի համամասնությանը կամ քաղաքական կուսակցություններին, քանի որ վերանայման հիմքերը կենտրոնանում են թեկնածուի համապատասխանության, այլ ոչ թե լայնածավալ ընտրական ընթացակարգերի վրա: Հետևաբար, թեկնածուների ներգրավումը դատական բողոքարկման գործընթացում նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով նաև այն, որ որոշ խորհրդարանական երկրներում, օրինակ՝ Գերմանիայում, նման բողոքարկման կառուցակարգն ընդհանրապես բացակայում է:

7.4. Նոր Սահմանադրությամբ Վճռաբեկ դատարանին տրվել է օրենսդրության կիրառման վերաբերյալ խորհրդատվական պարզաբանումներ տրամադրելու լիազորություն: Սա հիմնավորվում է աբստրակտ (վերացական) մեկնաբանության միջոցով իրավական որոշակիության և օրենքի միատեսակ կիրառության արդյունավետությունն առավելագույնի հասցնելու անհրաժեշտությամբ: Քանի որ գործող օրենսդրությամբ Վճռաբեկ դատարանն իր առաքելությունն իրականացնում է բացառապես կոնկրետ դատական ակտերի վերանայման միջոցով, որոշակի իրավիճակներում (բողոքարկման հնարավորության բացակայություն, սեղմ ժամկետներ) օրենսդրական բացերին կամ հակասություններին օպերատիվ արձագանքելու գործիքակազմը մնում է չիրացված: Հիմնվելով միջազգային, մասնավորապես՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Իտալիայի և Ֆրանսիայի փորձի վրա, որտեղ բարձրագույն դատական ատյանների պլենումները տրամադրում են ուղեցուցային պարզաբանումներ դատական պրակտիկայի միասնականությունն ապահովելու համար, առաջարկվում է ներդնել համանման կառուցակարգ: Այս

նորամուծությունը թույլ կտա Վճռաբեկ դատարանին աջակցել ստորադաս դատարաններին՝ կանխելով հնարավոր դատական սխալները՝ նվազեցնելով նաև այդ ակտերի բողոքարկման անհրաժեշտությունը և ծանրաբեռնվածությունը վերադաս դատական ատյաններում:

7.5. Վերանայվել է նաև վերաքննիչ դատարանների գործառույթը՝ հնարավորություն ընձեռելով օրենքով վերաքննիչ դատարանի համար սահմանել նաև, առաջին ատյանի դատարանների դատական ակտերի վերանայումից բացի, արդարադատության իրականացման այլ դեպքեր, օրինակ՝ որոշակի գործերով որպես գործի վերանայման առաջին օղակ հանդես գալու հնարավորություն նախատեսելը՝ արդարադատության արդյունավետության նպատակներից ելնելով:

7.6. Արդարադատության իրականացման կառուցակարգերում հատուկ մատնանշվել են նաև վեճի լուծման այլընտրանքային, այդ թվում՝ արտադատական եղանակները՝ որպես վեճերի լուծման ժամանակակից մեխանիզմներ: Սա թույլ կտա ամուր սահմանադրաիրավական հիմք ունենալ տարբեր ոլորտներում օրենքով արտադատական, այդ թվում՝ պարտադիր մեխանիզմներ սահմանելու համար, ինչը կարևոր նշանակություն ունի դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման և իրավունքների առավել արագ և արդյունավետ պաշտպանության տեսանկյունից: Նշվածը վերաբերում է ոչ միայն մասնավոր, այլ նաև հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի դեպքում արտադատական մեխանիզմների կիրառմանը՝ վեճերի լուծման համապատասխան մարմիններ ստեղծելու միջոցով:

7.7. Վերանայվել են դատավորներին ներկայացվող պահանջների և պաշտոնավարման տարիքի հետ կապված կարգավորումները: Նոր Սահմանադրության նախագծով Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դատավորների, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի անդամների համար տարիքային ցենզի վերացումը և մասնագիտական փորձառության շեմի վերանայումը հիմնավորվում են դատական համակարգի երիտասարդացման և նոր կադրերի ներգրավման ճկունության ապահովման անհրաժեշտությամբ: Միջազգային չափանիշները, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները, ԵԴԽԽ թիվ 10 եզրակացությունը և Դատավորների համընդհանուր խարտիան, թեև սահմանում են որակավորման պահանջներ, սակայն դրանց սահմանադրական ամրագրման պարտադիր կանոններ չեն նախատեսում՝ հարցի կարգավորումը թողնելով պետության հայեցողությանը: Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ եվրոպական չափանիշները շեշտադրում են արժանիքների վրա հիմնված ընտրությունը և չեն նախատեսում տարիքի

վերաբերյալ համընդհանուր սահմանափակումներ[75], իսկ զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ նմանատիպ պահանջները սովորաբար կարգավորվում են ոչ թե Սահմանադրությամբ, այլ օրենքներով՝ հնարավորություն տալով արժանիքների հիման վրա ապահովելու պատրաստված մասնագետների մուտքը բարձրագույն դատական ատյաններ:

7.8. Դատավորի պաշտոնավարման առավելագույն տարիքը հստակ չսահմանելը և այդ հարցի կարգավորումը օրենսդրությանը վերապահելը հիմնավորվում են դատական համակարգի ճկունությունն ապահովելու և դատավորների միջև հնարավոր խտրական տարբերակումները բացառելու անհրաժեշտությամբ: Վենետիկի հանձնաժողովն իր նախկին կարծիքներում մատնանշել է, որ կենսաթոշակային տարիքի բարձրացումը թույլ է տալիս առավելագույնի հասցնել դատավորների փորձից ու գիտելիքներից ստացվող օգուտը[76], միաժամանակ զգուշացնելով տարբեր ատյանների դատավորների համար տարիքային կտրուկ տարբերակումներ սահմանելու ռիսկերի մասին, ինչը կարող է հանգեցնել դատավորների «վերին» և «ստորին» դասերի ստեղծման ու վտանգել արդարադատության անկախությունը[77]: Հաշվի առնելով միջազգային, մասնավորապես՝ սկանդինավյան երկրների, Բելգիայի և Լիտվայի փորձը, որտեղ պաշտոնավարման ժամկետը եզրագծվում է ընդհանուր կենսաթոշակային տարիքին հասնելով, առաջարկվում է հրաժարվել սահմանադրական կոշտ ամրագրումից՝ հնարավորություն տալով օրենսդրորեն առավել ճկուն արձագանքելու ժողովրդագրական և մասնագիտական մարտահրավերներին:

7.9. Դատական իշխանությանը վերաբերող գլխում տեղ են գտել նաև մի շարք այլ նորամուծություններ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի դատավորի թափուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի կողմից մեկ թեկնածուի առաջադրման կարգի սահմանումը նպատակաուղղված է դատավորների ընտրության գործընթացում քաղաքական ազդեցության նվազեցմանը և թեկնածուների մասնագիտական հեղինակության պաշտպանությանը: Թեև Ազգային ժողովի կողմից թեկնածուի ընտրությունը խորհրդարանական համակարգում

---

75 European Commission for Democracy through Law (Venice Commission). (2019). Opinion CDL-AD(2019)024-e. Retrieved from https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)024-e, կետ 55

76 Venice Commission. Opinion CDL-AD(2004)024. §25

77 Venice Commission. Opinion CDL-AD(2013)034, §30, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282013%29034-e

հաղորդում է անհրաժեշտ ժողովրդավարական լեգիտիմություն[78], սակայն մի քանի թեկնածուների միջև ընտրություն կատարելու մեխանիզմը ստեղծում է քաղաքական հայեցողության ռիսկեր և հեղինակության հետ կապված խնդիրներ՝ չընտրված անձանց համար: Համաձայն Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման՝ խորհրդարանին չպետք է տրվի թեկնածուների «իրական ընտրության» հնարավորություն, այլ պետք է վերապահվի վետոյի իրավունք՝ յուրաքանչյուր տեղի համար ԲԴԽ-ի կողմից մասնագիտական արժանիքների հիման վրա առաջադրված մեկ թեկնածուի հաստատման կամ մերժման միջոցով[79]: Այս կարգավորումը համահունչ է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքին և ապահովում է, որ դատավորների առաջխաղացումը հիմնվի բացառապես օբյեկտիվ չափանիշների ու արժանիքների վրա[80]:

7.10. Սահմանադրական դատարանի փոխնախագահի պաշտոնի նախատեսումից հրաժարվելը հիմնավորվում է այն հանգամանքով, որ նման ներքին կազմակերպական մանրամասների ամրագրումը սահմանադրական մակարդակում անհարկի է և հակասում է միջազգային համեմատական պրակտիկային: Քանի որ գործող օրենսդրությամբ փոխնախագահի գործառույթը սահմանափակվում է բացառապես նախագահի բացակայության ժամանակ վերջինիս ժամանակավոր փոխարինմամբ[81], իսկ այլ դատական ատյանների դեպքում նմանատիպ հարցերը հաջողությամբ լուծվում են փոխարինման այլ կառուցակարգերով, առաջարկվում է հետևել Գերմանիայի և Իսպանիայի փորձին, որտեղ Սահմանադրությամբ ամրագրվում են միայն հիմնական մարմիններն ու գործառույթները: Այսպիսով, սահմանադրական նորմերի ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով փոխնախագահի պաշտոնի նախատեսման կամ փոխարինման կարգի հստակեցումը վերապահվում է օրենսդրական կարգավորմանը, որը թույլ կտա ավելի ճկուն կազմակերպել դատարանի ներքին գործունեությունը:

7.11. Նոր Սահմանադրության նախագծով սահմանվել են նաև կարգավորումներ Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրության հետ կապված հնարավոր փակուղիները հաղթահարելու

---

78 Սահմանադրական դատարանի 02.06.2023 թվականի ՍԴՈ-1691 որոշում

79 Venice Commission. Opinion on the High Judicial Council of Serbia, CDL-AD(2008)006, §48

80 Recommendation CM/Rec(2010)12 of the Committee of Ministers to member states on judges: independence, efficiency and responsibilities https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilites-of-judges/16809f007d

81 Սահմանադրական դատարանի փոխնախագահի ընտրության մանրամասները սահմանված են Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածով:

համար: Վենետիկի հանձնաժողովը, կարևորելով որակյալ մեծամասնության դերը, մի շարք կարծիքներում շեշտել է փակուղուց դուրս գալու արդյունավետ մեխանիզմների անհրաժեշտությունը՝ դատական համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու համար[82]: Միջազգային պրակտիկայում այս խնդրի հաղթահարման տարածված տարբերակ է մի քանի անհաջող քվեարկությունից հետո պահանջվող ձայների շեմի նվազեցումը, ինչպես առաջարկվել է, օրինակ, Թունիսի[83] և Մոնտենեգրոյի[84] դեպքերում, որտեղ դիտարկվել է երկրորդ փուլում դատավորների ընտրությունը պատգամավորների ձայների մեծամասնությամբ իրականացնելու մոդելը: Հետևաբար, ընտրության երկրորդ փուլում ձայների պարզ մեծամասնության շեմին անցում կատարելը հավասարակշռված լուծում է. այն սկզբնական փուլում խթանում է քաղաքական ուժերի միջև փոխզիջման որոնումը, իսկ դրա ձախողման դեպքում երաշխավորում է Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների թափուր տեղերի համալրումն ու դատական իշխանության անընդհատությունը:

7.12. Նոր Սահմանադրության նախագծի անցումային դրույթներով ներդրվել է նաև դատավորների վերագնահատում իրականացնելու նոր գործիքակազմ՝ ուղղված դատական իշխանության նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը, դատարանների անկախության և դատավորների բարեվարքության երաշխավորմանը: Դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության ամրապնդումը, դատարանների անկախության և դատավորների բարեվարքության երաշխավորումը պահանջում են այնպիսի անցումային կառուցակարգերի նախատեսում, որոնք հնարավորություն կտան ոչ միայն ապագայում կանխարգելելու բարեվարքության պահանջներին չհամապատասխանող անձանց մուտքը դատական համակարգ, այլև համարժեքորեն գնահատելու արդեն իսկ պաշտոնավարող դատավորների համապատասխանությունը դատավորի պաշտոնին ներկայացվող պահանջներին:

7.13. Գործող օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված են դատավորների թեկնածուների բարեվարքության ստուգման որոշակի կառուցակարգեր: Մասնավորապես, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների և դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության ուսումնասիրություն, որի շրջանակում, ի թիվս

82 CDL-AD(2021)032, Serbia, § 96, CDL-AD(2025)021, Chile, §§ 51, 53

83 CDL-AD(2015)024, Tunisia, § 21

84 CDL-AD(2013)028, Montenegro, § 23

այլնի, ուսումնասիրվում են թեկնածուի և նրա ընտանիքի անդամների գույքային դրությունը, պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքները, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված լինելու վերաբերյալ տեղեկությունները: Հանձնաժողովն իրավասու է պահանջելու և ստանալու նաև բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, իսկ ուսումնասիրության արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնում է խորհրդատվական եզրակացություն: Միևնույն ժամանակ, Դատական օրենսգրքով դատավորի վարքագծի կանոններում ամրագրվել են գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր ներկայացնելու, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով գույքի փոփոխությունը հիմնավորող նյութեր և պարզաբանումներ ներկայացնելու պարտականությունները: Այդ պարտականությունների խախտումը կարող է հիմք լինել կարգապահական վարույթ հարուցելու և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդություն ներկայացնելու համար:

7.14. Այդուհանդերձ, նշված կառուցակարգերն ամբողջությամբ չեն լուծում պաշտոնավարող դատավորների համակարգային վերագնահատման խնդիրը: Դրանք հիմնականում վերաբերում են դատավորների թեկնածուների (հավակնորդների) կամ արդեն գործող դատավորների առանձին վարքագծային կամ հայտարարագրման պարտականությունների խախտումներին: Մինչդեռ վաղուց ձևավորվել է հստակ հանրային պահանջ՝ իրականացնելու գործող դատավորների համընդհանուր գնահատում, որը պետք է ներառի ինչպես բարեվարքության, այնպես էլ մասնագիտական կարողությունների և գույքային դրության ստուգումը, այդ թվում՝ կոռուպցիոն կամ քրեական ենթամշակույթ կրող շրջանակների հետ հնարավոր կապերի բացահայտումը:

7.15. Սահմանադրությամբ նման համընդհանուր վերագնահատման գործիքակազմ ներդնելու անհրաժեշտությունը բխում է նրանից, որ դատավորի լիազորությունների դադարեցման հիմքերը սահմանվում են Սահմանադրությամբ: Բացի այդ, հայտարարագիր ներկայացնելու կարգի խախտումները կարգապահական պատասխանատվության հիմք են դարձել միայն 25.03.2020 թվականին Դատական օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո, իսկ հայտարարագրման հետ կապված վարչական և քրեական պատասխանատվությունը գործում է միայն 2017 թվականից: Հետևաբար, մինչև համապատասխան կարգավորումների ուժի մեջ մտնելը եղած գույքային դրությունը ուսումնասիրելու համար անհրաժեշտ են

սահմանադրական հիմքեր՝ հետադարձ ուժի արգելքի սահմանափակումները հաղթահարելու համար[85]:

7.16. Հետևաբար, դատավորների համընդհանուր վերագնահատման արդյունավետ և իրավաչափ իրականացումը հնարավոր է ապահովել ոչ թե գործող օրենսդրության առանձին փոփոխություններով, այլ Սահմանադրության անցումային դրույթներում հատուկ, մեկանգամյա և ժամանակային առումով սահմանափակ կառուցակարգ նախատեսելու միջոցով: Այդպիսի մոտեցումը թույլ կտա կանխել հետադարձ ուժի, դատավորի անփոփոխելիության, դատական անկախության և կարգապահական պատասխանատվության սահմանադրական հիմքերի հետ կապված իրավական անորոշությունները՝ միաժամանակ ստեղծելով դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության ամրապնդման սահմանադրական հիմք:

7.17. Առաջարկվող կարգավորումը հիմնված է այն տրամաբանության վրա, որ Սահմանադրությունն ուժի մեջ մտնելու պահին պաշտոնավարող դատավորները չեն դադարում իրականացնել դատական իշխանության գործառույթները, այլ շարունակում են պաշտոնավարել որպես դատավորի ժամանակավոր պաշտոնակատարներ մինչև օրենքով սահմանված կարգով նրանց վերագնահատման արդյունքների հիման վրա դատավորի պաշտոնում նշանակումը կամ ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունների դադարեցումը: Նրանք, սակայն, օժտված կլինեն նույն սոցիալական երաշխիքներով և կշարունակեն իրականացնել արդարադատություն, իսկ նրանց կայացրած ակտերը կունենան նույն իրավական ուժը: Այս լուծումը մի կողմից երաշխավորում է դատարանների գործունեության շարունակականությունը և կանխում դատական համակարգի կաթվածահարումը, իսկ մյուս կողմից հստակ արձանագրում է, որ վերագնահատման արդյունքը ոչ թե գործող դատավորի նկատմամբ սովորական կարգապահական պատասխանատվության կիրառում է, այլ նոր սահմանադրական անցումային կարգով դատավորի պաշտոնում վերջնական նշանակման կամ չնշանակման հարցի լուծում:

7.18. Վերագնահատման բովանդակությունը պետք է ընդգրկի այն հիմնական ուղղությունները, որոնք անհրաժեշտ են դատավորի պաշտոնին համապատասխանությունը գնահատելու համար՝ բարեվարքության ստուգում, վարքագծի կանոնների և շահերի բախման կանոնների պահպանում, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանում,

85 CDL-AD(2019)024, կետեր 41, 62, CDL(2019)030, կետեր 41, 61

մասնագիտական կարողությունների ստուգում, ինչպես նաև գույքային դրության համապատասխանության ստուգում՝ ըստ օրինական եկամուտների: Միջազգային փորձը ևս վկայում է, որ դատավորների վերագնահատման կառուցակարգերում բարեվարքությունը դիտարկվում է որպես ինքնուրույն և բովանդակային չափանիշ: Օրինակ՝ Ալբանիայում վերագնահատումը ներառում է գույքային դրության գնահատումը, ոչ պատշաճ կապերի ստուգումը և մասնագիտական կարողությունների գնահատումը, իսկ Մոլդովայում՝ էթիկական և ֆինանսական բարեվարքության ստուգումը[86]:

7.19. Միաժամանակ նախագծով առաջարկվում են հետևյալ լուծումները.

1) վերագնահատման գործառույթը պատվիրակվում է այդ նպատակով ստեղծվող հատուկ մարմնին՝ Դատավորների վերագնահատման հանձնաժողովին, որի ձևավորման հարցում մասնակցություն են ունենալու Հանրապետության նախագահը, Կառավարությունը և Մարդու իրավունքների հանձնակատարը, իսկ անդամներին ընտրելու է Ազգային ժողովը: Կոռուպցիայի կանխարգելման համար ստեղծված ինքնավար պետական մարմինը (ԿԿՀ) պետք է օժանդակի նորաստեղծ հանձնաժողովին իր լիազորություններն իրականացնելու համար՝ հաշվի առնելով օրենքով ԿԿՀ-ին արդեն իսկ վերապահված գործիքակազմը: Սա թույլ կտա օգտագործել ԿԿՀ-ի արդեն իսկ կայացած տեղեկատվական բազան և տվյալներին հասանելիության փորձը, միաժամանակ ապահովել վարույթի անկախությունն ու բազմակողմանիությունը.

2) հատուկ բողոքարկման մարմին ստեղծելու փոխարեն վերագնահատման արդյունքների բողոքարկման ատյան է սահմանվում Սահմանադրական դատարանը.

3) վերագնահատման համար սահմանվում է հինգ տարի, որը կանխելու է դատական իշխանության երկարատև անկայունությունը.

4) վերագնահատման ենթակա կլինեն նաև Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամները:

---

[86] Ալբանիայում վեթթինգը կարգավորվեց Սահմանադրությամբ և կից հավելվածով՝ նախատեսելով 9-ամյա անցումային շրջան: Այնտեղ գնահատումն իրականացվում է երեք ուղղությունով (գույքային դրության գնահատում, հանցավոր գործունեության մեջ ներգրավված անձանց հետ կապերի ստուգում և մասնագիտական կարողությունների գնահատում): Մոլդովայում վեթթինգը բաղկացած է եղել էթիկական և ֆինանսական բարեվարքության ստուգումից, որտեղ հստակ ժամկետներ են սահմանված (վերջին 5 տարում՝ էթիկայի կանոնների խախտում, վերջին 10 տարում՝ շահերի բախում, վերջին 12 տարում՝ գույքի և եկամուտների անհամապատասխանություն): Ուկրաինական փորձից տեղայնացվել են գնահատման երեք հիմնական հենասյուները՝ կարողունակություն (մասնագիտական, անձնական, սոցիալական), մասնագիտական էթիկա և բարեվարքություն:

7.20. Նոր Սահմանադրության մեջ այս կարգավորումների ամրագրումը հնարավորություն կտա իրականացնելու դատավորների օրինական, համընդհանուր, մեկանգամյա վերագնահատում: Սա իրավական հաստատուն հիմքեր կստեղծի դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունն ամրապնդելու և դատավորների իրական անկախությունը երաշխավորելու համար:

8. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

8.1. Նոր Սահմանադրության նախագծում դատախազությունը հստակորեն սահմանվում է որպես միասնական անկախ համակարգ, որը գործում է գլխավոր դատախազի ղեկավարությամբ:

8.2. Դատախազության անկախ համակարգ լինելու վերաբերյալ ուղիղ շեշտադրումը պայմանավորված է միջազգային չափանիշներով, համաձայն որոնց՝ պետությունները պետք է ապահովեն դատախազության անկախության բնույթն ու ծավալը օրենքով ամրագրելու արդյունավետ միջոցներ[87]: Միաժամանակ, Վենետիկի հանձնաժողովը արձանագրել է դատախազության անկախության ամրապնդման ընդհանուր միտումը եվրոպական համակարգերում[88]: Շեշտադրումը նպատակ ունի ոչ միայն փաստացի առկա ինստիտուցիոնալ կարգավիճակը ձևակերպելու, այլ նաև բարձրացնելու դատախազության նկատմամբ հանրային վստահությունը՝ որպես անկախ և քաղաքական ազդեցություններից զերծ մարմնի:

8.3. Մյուս կարևոր նորամուծությունն այն է, որ առաջին անգամ սահմանադրական մակարդակում նախատեսվում է Դատախազական խորհրդի ստեղծումը՝ որպես անկախ մարմին, որը երաշխավորում է դատախազության համակարգի անկախությունը և արդյունավետությունը: Խորհուրդը ստանում է առանցքային լիազորություններ, այդ թվում՝ դատախազների թեկնածուների ցուցակների կազմավորում, կարգապահական վարույթների իրականացում, գլխավոր դատախազի նկատմամբ քրեական հետապնդման հարուցում, բյուջետային ինքնուրույնության տարրերի ապահովում և այլն:

8.4. Այս մոդելը համահունչ է միջազգային մոտեցումներին, ըստ որոնց՝ դատախազական խորհուրդների սահմանադրական ամրագրումը դիտարկվում է

87 Council of Europe. Recommendation Rec(2000)19 on the Role of Public Prosecution, § 14

88 Venice Commission. Report on European Standards as regards the Independence of the Prosecution Service, CDL-AD(2010)040. §26

որպես անկախության կարևոր երաշխիք[89]: ՏՀԶԿ-ի Ստամբուլյան գործողությունների ծրագրի 5-րդ փուլի զեկույցով դատախազության անկախությունը գնահատվել է «միջին»՝ դատախազական կառավարման լիարժեք մարմինների բացակայության պատճառով: Էթիկայի և որակավորման հանձնաժողովները չեն համարվել անկախ, քանի որ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները ձևավորում և նախագահում էին այդ հանձնաժողովները[90]:

8.5. Նախատեսվել է Դատախազական խորհրդի խառը կազմ՝ 5 դատախազ անդամ և 5 ոչ դատախազ անդամ: Այս հավասարակշռված կազմը նպատակ ունի բացառելու ինչպես քաղաքական, այնպես էլ կորպորատիվ ազդեցությունները և ապահովելու համակարգի ինքնավարությունը[91]: Ընդ որում, այստեղ ևս ամրագրվել է, որ դատախազ չհանդիսացող անդամներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների առաջադրմամբ:

8.6. Նոր Սահմանադրության նախագծով պահպանվում են դատախազության հիմնական գործառույթները (քրեական հետապնդում հարուցել, մինչդատական վարույթի օրինականության հսկողություն, մեղադրանքի պաշտպանություն և այլն), սակայն կատարվում է երկու էական փոփոխություն.

1) Նոր Սահմանադրության նախագծով «պետական շահ» ձևակերպումը փոխարինվում է «հանրային շահ» հասկացությամբ՝ ապահովելով, որ այն ներառի նաև համայնքային շահերը: Այս փոփոխությունը բխում է ներպետական օրենսդրական զարգացումներից և իրավակիրառ պրակտիկայից, ըստ որի՝ «համայնքային շահը» ներառվում է «պետական շահի» մեջ: Նման մոտեցումը թույլ է տալիս խուսափել տարընկալումներից և համապատասխանում է միջազգային փորձին, որտեղ կիրառվում են առավել ընդհանրական՝ «հանրային շահ» կամ «օրենքով պաշտպանվող շահ» հասկացությունները:

2) Նոր Սահմանադրության նախագծով չի նախատեսվում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության լիազորությունը: Վենետիկի հանձնաժողովն իր կարծիքներից մեկում բացասական դիտարկում է արել դատախազությանը «ընդհանուր վերահսկողական» գործառույթ վերապահելու առնչությամբ՝ այն տեսանկյունից, որ դատախազը նշված գործառույթի շրջանակում համատեղում էր

89 Venice Commission), CDL-AD(2021)015-e, adopted by the Venice Commission at its Plenary Session https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2021)015-e § 13

90 OECD. Armenia Fifth Round of Anti-Corruption Monitoring Report, 2025. հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://doi.org/10.1787/3d273009-en. 126-128 pages

91 Consultative Council of European Prosecutors. Opinion No. 18 (2023).

տարբեր մարմինների՝ վարչական և սահմանադրական դատարանների, ինչպես նաև օմբուդսմենի ինստիտուտի լիազորությունները: Դատախազության դերի նման լայն սահմանման հիմնավորումը վերանում է, երբ ստեղծվում են իրավակարգի և քաղաքացիական իրավունքների պահպանմանն ուղղված այլ ինստիտուտներ[92]: Նման «վերահսկողական» դատախազական մոդելը իրականում հիշեցնում է հին խորհրդային պրոկուրատուրայի մոդելը[93]:

8.7. Դատախազների գործառութային անկախությունը և գործունեությանը չմիջամտելու երաշխիքներն ապահովելու նպատակով նոր Սահմանադրության նախագծում ամրագրվել է կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշումների անկախ դատական վերանայման հնարավորությունը: ՄԱԿ-ի Դատախազների դերի վերաբերյալ ուղեցույցների (կետ 21) և Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ կարգապահական սանկցիաները պետք է ենթակա լինեն դատական բողոքարկման, որը կամայականություններից պաշտպանվելու հիմնարար երաշխիք է: ՏՀԶԿ-ի (OECD) 2020 թվականի զեկույցը նույնպես շեշտում է, որ կարգապահական վարույթները պետք է հիմնված լինեն թափանցիկ չափորոշիչների վրա և առնվազն լուրջ դեպքերում ապահովեն դատական վերանայման հնարավորություն՝ երաշխավորելով արդար և անկողմնակալ ընթացակարգեր[94]: Միջազգային առաջադեմ փորձը, մասնավորապես Լատվիայի, Սերբիայի և Բոսնիա ու Հերցեգովինայի օրինակները փաստում են, որ դատական վերահսկողությունը՝ թե՛ վարչական, թե՛ մասնագիտացված դատարանների միջոցով, անհրաժեշտ է դատախազության ներքին կարգապահական որոշումների օբյեկտիվությունն ու իրավաչափությունը երաշխավորելու համար:

8.8. Ինչ վերաբերում է քննչական մարմիններին, ապա նոր Սահմանադրության նախագծով առաջին անգամ հստակ սահմանվում է քննչական մարմինների կարգավիճակը: Նախատեսվում է, որ դրանք կարող են գործել ինչպես գործադիր իշխանության կազմում, այնպես էլ ստեղծվել որպես միանձնյա ղեկավարվող ինքնավար մարմիններ, իսկ կոռուպցիոն և պաշտոնեական

---

92 Venice Commission. Opinion CDL-AD(2005)014. հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2005)014-e

93 OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR). (2013). Opinion on Key Legal Acts Regulating the Prosecution Service of the Kyrgyz Republic. հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.legislationline.org/documents/id/18547

94 OECD. (2020). The independence of prosecutors in Eastern Europe, Central Asia and Asia Pacific. OECD Anti-Corruption Network. Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.oecd.org/content/dam/oecd/en/networks/acn/documents-(pdfs)/Independence-of-Prosecutors.pdf

հանցագործությունների քննությունը պարտադիր վերապահվում է ինքնավար քննչական մարմիններին՝ գործադիր իշխանությունից իր ինքնուրույնությունն ընդգծելու նպատակով: Դա անհրաժեշտ կլինի լիազորությունները պատշաճ և օբյեկտիվ իրականացնելու համար:

9. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

9.1. Նոր Սահմանադրության նախագծով «Տեղական ինքնակառավարում» գլխում առաջին էական նորամուծությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության հստակեցումն է՝ ընթացիկ քաղաքական կոնյունկտուրայից կախված օրենսդրական փոփոխությունների ռիսկը նվազեցնելու նպատակով: Ըստ այդմ՝ նոր նախագիծը հստակ ամրագրում է համամասնական ընտրակարգը և համայնքի ղեկավարի անուղղակի ընտրության մոդելը: Այս մոտեցումը հիմնավորվում է Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշմամբ, համաձայն որի՝ «լավ փորձ է համարվում նման կարևոր հարցերն ուղղակիորեն ամրագրել Սահմանադրությամբ՝ դրանք օրենսդրությանը թողնելու փոխարեն[95]»: Սահմանադրական մակարդակով ընտրակարգի հստակեցումը թույլ է տալիս խուսափել զգայուն ոլորտում առկա այն «մշտական գայթակղությունից», որը մշտապես առաջանում է գործող մեծամասնության շրջանում՝ փոփոխելու կարգավորումները սեփական հայեցողությամբ և քաղաքական մանևրումների նպատակով[96]:

9.2. Միաժամանակ, Նոր Սահմանադրության նախագիծը նպատակ ունի լրացնել իրավական այն բացը, որի պատճառով համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և պաշտոնակատարների նշանակման հարցերը ամբողջությամբ թողնվել են օրենքի հայեցողությանը: Վենետիկի հանձնաժողովն իր եզրակացություններում շեշտում է, որ գործադիր իշխանության նման միջամտությունը կարող է վտանգել տեղական ինքնակառավարման սկզբունքը[97] և հորդորում է սահմանել հստակ երաշխիքներ, ինչպիսիք են Սահմանադրական դատարանի հետ խորհրդակցելը կամ պաշտոնակատարի մանդատի ժամկետային խիստ սահմանափակումը[98]: Նախագծով առաջարկվող վեցամսյա առավելագույն ժամկետի սահմանումը և նոր ընտրությունների անցկացման պարտադիր պահանջը համահունչ են միջազգային

95 Venice Commission. Opinion CDL-AD(2021)007. para. 115

96 Venice Commission. Opinion CDL-AD(2013)032. §§194-196

97 Venice Commission. Opinion CDL-AD(2004)044. §§66

98 Venice Commission. Opinion CDL-AD(2015)028. §13

չափանիշներին և ուղղված են կամայականությունների բացառմանը: Սա ապահովում է անցում օրենսդրական փոփոխական կարգավորումներից դեպի սահմանադրական կայուն երաշխիքներ՝ կանխելով գործադիր իշխանության կողմից տեղական ինքնակառավարման էության խաթարումը:

9.3. Մյուս կարևոր նորամուծությունը այն է, որ համայնքներին վերապահվել է տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացումը հարմարեցնելու ողջամիտ հայեցողություն: Սա խարսխված է պետական կառավարման արդյունավետության բարձրացման և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ինքնավարության պաշտպանության սկզբունքների վրա: Քանի որ տեղական ինքնակառավարման մարմիններն առավել քաջատեղյակ են տեղական խնդիրներին, պետական լիազորությունների պատվիրակումը թույլ է տալիս հանրային ծառայությունները համապատասխանեցնել քաղաքացիների կարիքներին և ակնկալիքներին[99]: Տեղական պայմաններին հարմարեցնելու «ողջամիտ հայեցողության» ամրագրումն անհրաժեշտ է, որ կանխվի տեղական իշխանությունների վերածումը կենտրոնական կառավարության պարզապես «գործադիր գործակալների», որը, ըստ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի բացատրագրի, կարող է լրջորեն խաթարել համայնքների ինքնավարությունը (Հոդված 4.5): Այս հայեցողությունը երաշխավորում է, որ պատվիրակված գործառույթները (օրինակ՝ անվտանգության կամ տրանսպորտի ոլորտում) չվերածվեն միայն մեխանիկական պարտավորությունների, այլ իրականացվեն՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները՝ ապահովելով հավասարակշռություն միատեսակ կանոնակարգերի և համայնքային ինքնուրույնության միջև:

9.4. Էական նորամուծություն է այն, որ պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին առնչվող հարցերով որոշումների ընդունման դեպքում պետք է համայնքների հետ իրականացվեն նախնական խորհրդակցություններ: Սա համահունչ է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի դրույթներին և դրանց մեկնաբանություններին, որոնց համաձայն՝ տեղական մարմինների հետ խորհրդակցությունը պարտադիր ընթացակարգային երաշխիք է՝ նրանց ինքնավարության ապահովման համար[100]: Նման կարգավորումը նպաստում է տեղական ինքնակառավարման

---

99 Council of Europe. Recommendation CM/Rec(2007)4.

100 Խարտիայի հոդվածներ 4.6 և 5-ի մեկնաբանություն, https://rm.coe.int/contemporary-commentary-by-the-congress-on-the-explanatory-report-to-t/1680a06149

արդյունավետությանը և որոշումների կայացման գործընթացում տեղական մակարդակի պատշաճ ներգրավմանը:

9.5. Նորամուծությունների մյուս ուղղությունը վերաբերում է համայնքային հարցերի լուծմանը ժողովրդի անմիջական մասնակցության գործիքներին: Առաջարկվող կարգավորումը, որով համայնքների միավորման կամ բաժանման դեպքում նախատեսվում է պարտադիր լսել տվյալ համայնքների կարծիքը՝ տեղական հանրաքվեի միջոցով, համահունչ է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածին, համաձայն որի՝ տեղական ինքնակառավարման սահմանների փոփոխությունները չեն կարող իրականացվել առանց նախնական խորհրդակցության՝ հնարավորության դեպքում հանրաքվեի միջոցով[101]: Այս մոտեցումը նաև արտացոլում է եվրոպական ստանդարտներում ամրագրված պահանջը՝ ապահովել, որ նման փոփոխությունները կատարվեն տեղական համայնքների իրական և արդյունավետ մասնակցությամբ: Համայնքի բնակիչների կողմից տեղական հանրաքվեի միջոցով համայնքային նշանակության հարցերի լուծման հնարավորության ամրագրումը բխում է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի հիմնարար սկզբունքներից, մասնավորապես՝ տեղական ժողովրդավարության և քաղաքացիների մասնակցության ապահովման պահանջից, որի համաձայն՝ «տեղական համայնքներ» հասկացությունը ներառում է նաև քաղաքացիներին և նրանց անմիջական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին[102]:

9.6. Տեղական ինքնակառավարմանը վերաբերող գլխում տեղ են գտել նաև մի շարք այլ նորամուծություններ: Այսպես՝

1) Ամրագրվել է համայնքի ավագանու նիստի իրավազորության պահանջ, որը բխում է կոլեգիալ կառավարման ժողովրդավարական սկզբունքից և միջազգային առաջադեմ փորձից (Գերմանիա, Շվեդիա, Լիտվա և այլն), որտեղ նիստերն իրավազոր են միայն անդամների մեծամասնության մասնակցության դեպքում: ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով ներկայացուցչական մարմինների գործունեությանը (ՍԴՈ-1384), շեշտել է, որ քվորումի ինստիտուտը կոլեգիալ մարմնի իրավազորության և բազմակարծության երաշխավորման հիմնարար պայման է, առանց որի «կիմաստազրկվի կոլեգիալ կառավարման սահմանադրական սկզբունքի էությունը»: Նպատակը այնպիսի խոցելի օրենսդրական կարգավորումների

101 Հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/european-charter-of-local-self-government-eng/1680a87cc3

102 Բացատրական զեկույց, հոդված 5, https://rm.coe.int/16800ca437

բացառումն է, որոնք թույլ են տալիս որոշումներ ընդունել անդամների ընդհանուր թվի ընդամենը մեկ քառորդով՝ դրանով իսկ վտանգելով իրավական որոշակիությունը և հանգեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կաթվածահարման կամ «փակուղային» իրավիճակների:

2) Հստակեցվել է համայնքի սեփական խնդիրների նկատմամբ իրականացվող իրավական հսկողության շրջանակը՝ այն ուղղելով բացառապես օրինականության և սահմանադրական սկզբունքների ապահովմանը: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 8-րդ հոդվածի և դրան կից բացատրագրի համաձայն՝ վարչական հսկողությունը պետք է սահմանափակվի տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունների օրինականության հարցով և չպետք է տարածվի դրանց նպատակահարմարության վրա[103]: Սա նշանակում է, որ վերահսկող մարմինը կարող է միայն պարզել՝ արդյոք տեղական ինքնակառավարման մարմինը պահպանել է գործող օրենքներն ու սահմանադրական չափանիշները և չպետք է միջամտի որոշումների էությանը՝ հիմնվելով սեփական քաղաքական կամ տնտեսական նախապատվությունների վրա[104]: Սահմանադրական մակարդակով իրավական հսկողության սահմանափակումը բացառապես օրինականության ստուգմամբ կկանխի տեղական ինքնակառավարման մարմինների ինքնավարության անհամաչափ սահմանափակումը և կապահովի, որ համայնքները կարողանան իրացնել իրենց սեփական խնդիրները՝ «սեփական պատասխանատվությամբ» և տեղական բնակչության շահերից ելնելով: Միաժամանակ հստակեցվել է, որ իրավական հսկողություն կարող է իրականացնել գործադիր իշխանության համակարգի մարմինը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

3) Միջհամայնքային միավորումների վերաբերյալ սահմանադրական մակարդակով կարգավորում նախատեսելու անհրաժեշտությունը բացառվել է, քանի որ դրանց ստեղծման, իրավական կարգավիճակի և լիազորությունների շրջանակը վերաբերում է կազմակերպաիրավական և գործառնական հարցերին, որոնք ըստ իրենց բնույթի պետք է կարգավորվեն օրենքով՝ ապահովելով ճկունություն տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման նկատմամբ. հետևաբար, նոր Սահմանադրության նախագծով այս նորմի չնախատեսումը հիմնավորված է

---

103 Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա,հոդված 8, մաս 2, 3 https://www.arlis.am/hy/acts/80563 , Explanatory Report to the European Charter of Local Self-Government Strasbourg, 15.X.1985 , art 8, para 2, 3 file:///C:/Users/Asus/Downloads/CETS_122_Rapex.docx.pdf

104 CG-FORUM(2020)02-05, A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government, § 123-134, հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/contemporary-commentary-by-the-congress-on-the-explanatory-report-to-t/1680a06149

Սահմանադրության հոչակագրային և հիմնարար բնույթի պահպանման, ինչպես նաև օրենսդրական մակարդակով արդյունավետ և փոփոխվող կարգավորման ապահովման անհրաժեշտությամբ:

10. ԱՆԿԱԽ ԵՎ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ

10.1. Նոր Սահմանադրության նախագծով իրականացվել է սահմանադրական նորմերի օպտիմալացում, և անկախ ու ինքնավար մարմիններին վերաբերող դրույթներն ամփոփվել են մեկ գլխում՝ հաշվի առնելով այդ մարմիններին վերաբերող կարգավորումների (անկախության երաշխիքներ, անհամատեղելիության պահանջներ, կազմավորման կարգ) նմանաբովանդակ լինելը:

10.2. Նախևառաջ վերանայվել է անկախ մարմինների շրջանակը: Այդ շրջանակից դուրս է թողնվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, քանի որ տվյալ մարմնի գործունեության բնույթը հիմնականում ռեգուլյատիվ է և բնութագրական ինքնավար մարմիններին, որոնք օժտված են գործադիր իշխանությանը բնորոշ գործառույթներով և իրականացնում են Կառավարության մշակած քաղաքականությունը տվյալ ոլորտում[105]: Բացի այդ, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործունեության շրջանակը խիստ սահմանափակ է, հանձնաժողովի լիազորությունները չեն տարածվում համացանցով տարածվող տեղեկատվության վրա, որի հետևանքով քաղաքացիները հաճախ ստանում են չստուգված տեղեկատվություն: Հետևաբար անհրաժեշտություն է առաջացել ճկունություն ապահովել հետագայում օրենսդրական մակարդակով նոր գործառույթներ սահմանելու համար, ինչը խիստ կարևոր է մեդիաոլորտի զարգացման արագ տեմպերին և նոր մարտահրավերներին հրատապ արձագանքելու նպատակով:

10.3. Միջազգային փաստաթղթերը, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (2000) 23 հանձնարարականը, շեշտադրում են հեռարձակման ոլորտի կարգավորող մարմինների անկախության ու անկողմնակալության ապահովումը, սակայն չեն պարտադրում այդ կարգավորումները նախատեսել հենց սահմանադրական մակարդակով: Հետևաբար, հանձնաժողովի վերաբերյալ կարգավորումներն օրենքով նախատեսելը

105 Ա. Մանասյան և Տ. Մարկոսյան, «Ինքնավարության իրավական բովանդակությունը և ինքնավար մարմինների առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում», Երևան, ԵՊՀ, 2020 թվական:

հնարավորություն կտա այս մարմնին օժտելու տեղեկատվության ստացման բոլոր եղանակներին վերաբերող առավել լայն և արդյունավետ լիազորություններով՝ միաժամանակ պահպանելով անկախության անհրաժեշտ երաշխիքները:

10.4. Նոր Սահմանադրության նախագծով ինքնավար մարմինները կարող են ստեղծվել Ազգային ժողովի սահմանած նպատակներով: Միջազգային փորձը վկայում է, որ այդ մարմինները պետք է գործեն հանրային կյանքի ամենաբազմազան ոլորտներում (բանկային համակարգ, կիբերանվտանգություն, բնապահպանություն և այլն), որտեղ անհրաժեշտ է մասնագիտացված և անկախ կառավարում[106]: Սահմանադրական նորմի նոր ձևակերպումը թույլ կտա օրենսդրին ինքնավար մարմիններ ստեղծելիս առաջնորդվել ոչ թե կոշտ սահմանադրական շրջանակով, այլ պետական կառավարման արդյունավետության և կոնկրետ ոլորտի մասնագիտական առանձնահատկությունների նպատակահարմարությամբ:

10.5. Նախատեսվել են նաև այլ կարևոր կարգավորումներ.

1) Մարդու իրավունքների հանձնակատարի համար նախատեսվել է վերընտրվելու սահմանափակում, որը նրա անկախության կարևորագույն երաշխիքներից է՝ բացառելով այն ռիսկը, որ Մարդու իրավունքների հանձնակատարի գործողությունները կամ դիրքորոշումները կարող են պայմանավորված լինել վերընտրվելու հնարավորության ազդեցությամբ[107]: Վենետիկի հանձնաժողովն արձանագրել է, որ Մարդու իրավունքների պաշտպանի միայն մեկ անգամ ընտրվելու հնարավորության նախատեսումը կամրապնդի նրա անկողմնակալությունը, սակայն նման սահմանափակման համար անհրաժեշտ է սահմանադրական մակարդակի լուծում[108]: Միաժամանակ, վեց տարի պաշտոնավարման ժամկետը յոթ տարի դարձնելու առաջարկը հիմնավորվում է նրանով, որ վերընտրվելու հնարավորության սահմանափակման պարագայում, ըստ Վենետիկյան սկզբունքների, նախընտրելի է, որ պաշտոնավարման ժամկետը չլինի ավելի քիչ, քան յոթ տարին[109]: Ավելի երկար ժամկետը՝ առանց վերընտրման իրավունքի, ապահովում է հաստատության ղեկավարի կայունությունն ու գործառութային անկախությունը:

---

106 Տե՛ս https://www.cisa.gov

107 Վենետիկի հանձնաժողովի 22.12.2006 թվականի թիվ 397 / 2006 կարծիքը, կետ 29, Հղումը՝ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2006)038-e

108 Վենետիկի հանձնաժողովի 25.11.2016 թվականի թիվ 866 / 2016 կարծիքը, կետ 35: Հղումը՝ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL(2016)044-e

109 Տե՛ս Վենետիկյան սկզբունքներ, կետ 10: Հղումը՝ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)005-e

2) Ընդլայնվել են Հաշվեքննիչ պալատի լիազորությունները, և սահմանվել է բյուջեի մուտքերի հաշվեքննության իրավասությունը, ինչը բխում է արտաքին պետական աուդիտի միջազգային սկզբունքներից, մասնավորապես՝ INTOSAI-ի կողմից ընդունված Լիմայի և Մեխիկոյի հռչակագրերից, որոնց դրույթները ենթակա են կիրառման՝ համաձայն ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի թիվ A/66/209 որոշման[110]: Մեխիկոյի հռչակագրով սահմանված գործառույթների սեփական հայեցողությամբ իրականացման լայն մանդատի և տեղեկատվության անսահմանափակ հասանելիության սկզբունքների լիարժեք ապահովումը[111] պահանջում է սահմանադրաիրավական այնպիսի հստակ ամրագրում, որը թույլ կտա հաշվեքննել ոչ միայն միջոցների «օգտագործումը», այլև դրանց ծագումը՝ մուտքերը: Նման ընդլայնումն անհրաժեշտ է պետական բյուջեի կատարման վերաբերյալ Ազգային ժողով ներկայացվող տարեկան եզրակացության արդյունավետությունն ու ամբողջականությունը երաշխավորելու համար:

3) Կենտրոնական բանկի գործառույթներում ամրագրվել է երկարաժամկետ տնտեսական զարգացմանը և հանրային բարեկեցությանը նպաստելու նպատակը: Սա միտված է հստակեցնելու Կենտրոնական բանկի հիմնական մանդատի վերջնական ուղենիշը՝ գործողությունները դարձնելով ավելի հաշվետվողական և հավասարակշռված: Թեև աշխարհում առկա են ինչպես հավասարազոր երկակի մանդատի (ԱՄՆ, Ավստրալիա), այնպես էլ միամանդատ հիերարխիկ նպատակի մոդելներ (Եվրոպական կենտրոնական բանկ)[112], Հայաստանի համար առաջարկվում է պահպանել միամանդատ մոդելը՝ գների և ֆինանսական կայունության ապահովումը, սակայն սահմանադրաիրավական մակարդակում ամրագրել դրա օրգանական կապը տնտեսական զարգացման հետ: Նման լրացումը համահունչ է Եվրոպական տնտեսական համագործակցության պայմանագրի տրամաբանությանը, որն աջակցում է տնտեսական քաղաքականության իրականացմանը՝ Եվրոպական միության առջև դրված խնդիրների իրագործման նպատակով[113], և թույլ կտա հաղթահարել գործող կարգավորումների միակողմանիությունը՝ սահմանելով այն վերջնանպատակը, որին պետք է ծառայի գների կայունության ապահովումը:

---

110 UN Resolution adopted by the General Assembly on 22 December 2011 'A/RES/66/209' para 4.

111 INTOSAI_P_10_en_2019. https://www.intosai.org/fileadmin/downloads/documents/open_access/INT_P_1_u_P_10/INTOSAI_P_10_en_2019.pdf

112 https://www.imf.org/external/np/seminars/eng/2006/mfl/njl.pdf

113 https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:12016E127

11. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵ

11.1. Նոր Սահմանադրության նախագիծը Սահմանադրության ընդունման, դրանում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև հանրաքվեի գործընթացում երկու առանցքային փոփոխություն է նախատեսում:

11.2. Նախ Սահմանադրությունը փոփոխելու հնարավորությունը նախատեսվել է բացառապես հանրաքվեի միջոցով: Սա պայմանավորված է ժողովրդավարական լեգիտիմության առավել բարձր մակարդակ ապահովելու անհրաժեշտությամբ: Առաջարկվող մոտեցումը ուղղակիորեն ամրագրում է, որ փոփոխություններ կարող են տեղի ունենալ միայն ժողովրդի անմիջական կամարտահայտությամբ՝ որպես իշխանության կրողի: Այսպիսով, հանրաքվեի պարտադիր պահանջը նպաստում է Սահմանադրության կայունությանը, բարձրացնում է դրա նկատմամբ հանրային վստահությունը և կանխում է քաղաքական մեծամասնությունների կողմից սահմանադրական կարգի միակողմանի փոփոխման հնարավորությունը՝ ապահովելով, որ յուրաքանչյուր նման փոփոխություն ունենա լայն հասարակական համաձայնություն և համահունչ լինի ժողովրդավարության հիմնարար սկզբունքներին:

11.3. Երկրորդ կարևոր նորամուծությունն այն է, որ քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու համար անհրաժեշտ ստորագրությունների թիվը նվազեցվել է՝ 300 հազարից դարձնելով 200 հազար, ինչպես նաև երկարաձգվել է ստորագրահավաքի ժամկետը՝ 60 օրից դարձնելով 120 օր: Սա հիմնավորվում է անմիջական ժողովրդաիշխանության այս գործիքի գործնական կիրառելիությունն ու արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ: Կարգավորումներով նախատեսված ստորագրությունների քանակը, որը կազմում է ՀՀ բնակչության շուրջ 11.5 տոկոսը, անհամաչափ բարձր է միջազգային պրակտիկայի համեմատ (օրինակ՝ Լեհաստանում այն կազմում է 0.26, իսկ Շվեյցարիայում՝ 1.17 տոկոս) և էապես դժվարացնում է նախաձեռնության իրացումը: Միաժամանակ, ստորագրահավաքի համար նախատեսված 60-օրյա ժամկետի կրկնապատկումը թույլ կտա խուսափել գործընթացի ձևական բնույթից՝ հնարավորություն ընձեռելով իրականացնել պատշաճ քարոզչական աշխատանք, հանրային բովանդակալից բանավեճ և բնակչության իրազեկում, որն անհրաժեշտ է քաղաքացիների կողմից իրազեկված որոշում կայացնելու և ժողովրդավարական մասնակցության ողջամիտ համամասնություն ապահովելու համար: